

ՏԵՂԻ

ՑԱՐԱՆ Թ. ԱՐԳԵՐԻՇԵ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

(Հայության պահանջման համար կենսագործակր)

ՆՈՐ - ԶՈՒԴՈ.

Տպարան Ս. Ամենափրկչ. Վանքի

1914

222

//

224

225

ՅԻԳԻՆ Թ. ԱԲԳՈՐԵԵՆԸ

805.10.

ՆՈՐ-ԶՈՒՂԱՑԻ

ԹՊՐԱՑՆԵՐԸ

(Հանգ. բարեւարձինի հոմանօս կենսագրութեամբ)



Տպագործ Ա. Ամենափրկշեան Վանքի

1914

Բ Ա Վ Ա Գ Ա Խ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա.

Նոր-Զուլայի առաջին դպրոցը, ծավալիր եւ լեբացաւարքեցեցեցը.—Մովսէս առաջնորդի աւելացաւած դպրոցները.—Ազա-Ռեօս Ռևիտանեանի եւ Զօգեթ Վ. օլֆի հիմնելիք դպրոցներ, — Փ. Առանեանի եւ Քուռ հաստատած դպրոցներ. 5—8 էջ:

Բ.

Յարութիւն Աբգաւեան, կենսագրութիւնը եւ հիմնած դպրոցը. — Ֆովիսնեան Սուրենեան առաջնորդի հաստատած հոգեւոր դրացոցը. — Ա. Մինսո Եկեղեցում բացուած առաջին դպրոցը. 9—11 էջ:

Գ.

Ազա - Շեռագ Մանուկեան, Տ. Մարիամ Յարութիւնեան, Օ. Թագուհի Մանուկեան, Շամիկ կենսագրութիւնը եւ հիմնած դրացոցը. 12—16 էջ:

Դ.

Մարգար Մուհիանեանի հիմնած դպրոցը. — Ազա - Կառապես Մառաժեանի հիմնելիք դպրոցը. — Շեռագ Յովսէփեան դպրոցը. — Խալիֆայական դպրոցները. — Ազգ. Կեդրոնեական դպրոցը. 17—19 էջ:

Ե.

Մանուկ Յարզանանեան, կենսագրութիւնը եւ հիմնած օրիուլաց դպրոցը. — Ազգային դպրոցների միաւթիւնը. — Ա. Կոստադինեան դպրոցի կառուցումն եւ 50-ամեայ յոբեկեանը. 20—24 էջ:

Զ.

Հայ-Կարօլիկաց Ա. Գր. Լուսաւորիչ դպրոցը. — Լազգարիս հայրենի հիմնած դպրոցները. — Քողօքակ ան միսիօնաւորեան դպրոցները. 30—32 էջ:

Է.

Քեռագ Քամունեանի կենսագրութիւնը. — Տ. Վ., Քամանեանի

նիմնած Գ.-Քանանեան դպրոցը.—Վ.Ե.Հ. Հայրապետի կոնդակը.—Նամակերտի Յովնանեան դպրոցը. 33—47 էջ:

Ը.

Մաղաքիա առաջնորդի հիմնելիք Հոգեւոր դպրոցը.—Հոգաբարձութեան ձեռնարկած զիւերօրիկ դպրոցը. — Ս. Ամենափրկչ. զիւերօրիկ Հոգեւոր դպրոցը.—Հնդկանայերի ծագիրն Ազգ. Կեդր. դպրոցի մասին. 48—50 էջ:

Թ.

Հոգաբարձութեան ձեռնարկած Արհեստագիւտական դպրոցը.—Աբգար եւ ընկերութեան հաստատած Արհեստ. դպրոցը եւ Ողումութեան Աւանդները. 51—53 էջ:

Ժ.

Բնիսանական և Արտաքին Աստուածաշնչի բնկերութեան գրավանառանոցը.—Ազգ. Կեդրոնական գրավանառանոցը. 54—55 էջ:

ՆՈՐ - ԶՈՒԴ. ԱՅԻ ԳՎՐՈՅՆԵՐԸ

«Առայօս կանուխ՝ Հայի երեխայք
Դպրոց են վազում զաւար ու արագ,
Հյու, ուշադիր սովորմ են համար,
Պատրաստում աննիւր զանձ ոզգի համար
Բրամիր տղայ Հայ տո's տեսած կատ—
Ի՞նչ է մեզ պակաս:

Գ.Ա.Մ.Ա.Ռ.—Գ.Ա.Թ.Խ.Վ.

Ա.



ՍՈՐ - ԶՈՒԴ. ԱՅԻ ԳՎՐՈՅՆԵՐԸ Հիմ-
նարկութեան տարիներից սկսած ունե-
նում է գպրոց: Առաջին գպրոցը Հիմ-
նընըն է Ամենափրկչեան Ս. Վանքում
և տառչին ուսուցիչը լինում է նոյն
վանքի առաջնորդ Խաչատուր Կեռաբա-
ցին: Սրանից յետով, միմեանց յաջորդում
են ուսուցչութեամբ Դաւիթի և Ատեփան-
նոս եպիսկոպոսները և Կոստանդ գպիրն:
Վերջինիս ժամանակաւայ աշակերտների
թիւը հասնում է 250-ի: Սրա ժամանակը նոր - Զուդոյի
ոսկեգործն է լինում վաճառականութեան տեսակէաից, ուս-
տի երեելի իշխաններն ու վաճառականներն անհրաժեշտ են

Համարում իրենց երեխաների համար գրագիտութիւնը՝ Նրանք բառականանում են միայն հասարակ գրել-կարդալ, թուաբանութիւն և վաճառականական խրատներ սովորեցնելով:

Սոյն Կոստանդ վարժապետը 1687 թուին հրատարակում է «Աշխարհաժողով» կոչուած մի զիրք, որի մէջ կան զանազան նիւթերի մասին գրուածքներ՝ թուաբանութիւն, վաճառականական խրատներ, Ազարիալի թուականի գործածութիւնը և այլն խառն նիւթեր: Յառաջ բերենք մի փոքրիկ նմուշ վաճառականական խրատներից:

«Մի երթիցեա միայն ի ճանապարհ: Անփորձ և անճանանչ ընկերի հետ մի նստիցես և մի քննիցես, գուցէ սպանցէ զքել և ասցէ զինչս քո: Պաշարն ի տաշտէդ առ ընկերն ի տանէդ: Քաղաքն ի ծոցդ պահեամ, զրիչ-զամբարն ի ջուրդ պահեամ: Վանթարն ի թամբաւիթդ, կշիռն իւր զրամներովն ի սխանանդ: Կիսագազն ի գօտիգ, խելքդ ի զլուխդ, միտքդ առ Աստուած: Ինչ Աստուած շնորհնացէ քեզ, նովաւ շատացիր . . . : Անփորձ մարդոյ ամանաթ մի տար: Զամենայն առ և տուրդ զրեամ և էսօրէն վազն մի ձգիր»: *)

Ժ. թ գալում նոր Զուղալի Ամենափրկչեան ս. Վանքի սոյն գալրոցը իր զիտական բարձրութեամբ մի լուսատու փարոս է լինում Հայութեան համար: Իր ուզգութեամբ ու ծրագրով մեծ օգուած է տալիս թէ մեր խզճուկ զրականութեան և թէ ընդհանուր ազգին, տալով անձնուեր, խելացի և գիտնական հոգեորականներ՝ առաջնորդներ ու կաթուղիկոսներ: Այս գալրոցի աշակելաներից են լինում Ամենափրկչեան ս. վանքի մի քանի տառաջնորդները, Յովհան «տիեզերալոյս» կոչուած ժամանակի ամենագիտնական

*) Յ. Տէր Յովհանեանի «Պատմ. ն.-Զուղալու» Բ. էջ 253:

վարդապետը, որ բազմաթիւ գրաւոր աշխատութիւններ ունի, Աստուածատուր վարդապետը, որ Կ. Պօլիս գնալով, պատճառ է լինում այնտեղի գրական շարժման, Ստեփաննոս ու Ոսկան վարդապետները, որոնք մեծ ջանք են թափում Հայկական տպագրութեան գործում: Վերջապէս այս դպրոցի աշակերտներից են լինում և Սիմէօն, Աղէքսանդր ու Յակովը կաթուղիկոսները: *)

1710-ական թուականներին Մովսէս առաջնորդն աւելացնում է և ուրիշ երկու դպրոցներ, մէկն Մուրագեանց ու Յակովբալ Նկեղեցում և միւսը ս. Ստեփաննոս եկեղեցում, որոնց մասին ոչ մի տեղեկութիւն չկալ:

1750 թուին Հնդկաստանի Մագրաս քաղաքի բնակիչ աշուղեալ Պետրոս Ռոկանեան Նոր-Զուզակեցի երեւլի իշխանն 26,500 ոռուփի է կտակում Նոր-Զուզակի մէջ մի դպրոց հիմնելու, ուր պիտի դասախոսուէր հայերէն, պարսկերէն և լատիներէն: Աակայն այն ժամանակուալ թէ Հնդկաստանի և թէ Պարսկաստանի խառն հանդամանքները արգելք են հանդիսանում բարեբար աղալի նպատակը իրագործելու:

1825 թուին պլ. Զօդէֆ Վոլֆ անունով մի անգլիացի գալով Նոր-Զուզա, կամենում է իր ծախքով մի դպրոց բանալ, յատկապէս հայ երեխաններին կրթութիւն և լուսաւորութիւն տալու, սակայն որա բարի գիտաւորութիւնն ևս խափանւում է քաղաքական ինչինչ աննպաստ հանդամանքների շնորհիւ:

*) «Բազմաթիւ» 1904 թ. էջ 361:

1833 թուին Մադրասաբնակ պլ. Գրիգոր Սամեան
երեքլի գոճուականը 20,000 ռուփի է կտակում նոր—Զու-
ղալուս իր անունով մի գալրոց հիմնելու։ Յաջորդ տարում
հաստատում է գալրոցը Ամենաավրկչեան ո. վանքի ծոցում
(նախկին գալրոցի տեղը) և ժամանակաւոր ուսուցիչ կարգուում
Յակովը ծ. գալրապետը։ Մի քանի ամսից յետոյ Յովհաննէս
Բ. առաջնորդի հրաւերով ո. Եջմիածնից գալիս է յալտնի
գիտնական Մեսրովը Թաղիագեանը որպէս ուսուցիչ նոյն
գալրոցի։ Սա երկու տարի միայն մնալով պաշտօնում՝ հրա-
ժարւում է, իսկ գալրոցը մի առ ժամանակ ևս կազե-կազ
կուավարաւելով 1837 թուին փակման գատապարտում։

1840 թուին, պլ. Յովհաննէս Մ. Զօրաբեանի ջանքե-
րով կրկին բացւում է նոյն Սամեան գալրոցը Ա. Սաեփան-
նոս եկեղեցու գաւթում և իր գոյսւթիւնը շարունակում է
մինչև 1853 թիւը, երբ Սամեան առևտրական տունը սնան-
կանում է և գալրոցին յառկացրուած 20,000 ռուփին ևս
կորչում մէջտեղից։

1841 թուին պլ. Բոռի անունով մի ֆրանսացի է գա-
լիս նոր Զուղա և Հայերէն, պարսկերէն ու ֆրանսերէն լե-
զուներ սովորեցնելու գիտաւորութեամբ մի գալրոց է բաց-
անում, ուր կարճ ժամանակում բաւականաշափ աշակերտ-
ներ ևս հաւաքւում են։ Սակայն զժամանակում մագելով լուսու-
որչական և կաթոլիկ հայերի սիցե, Խաչատուր առաջնորդը
յետ է կոչւում ո. Եջմիածին և պլ. Բոռին ևս սահմանում է
փակել գալրոցը և հետանալ Պարսկաստանից։



1795 թուին Նոր - Զուգայում տիրող Հարբատահարութիւններից և Հայերի կրած տառապանքներից խափառ ձանձրացած, 16 տարեկան մի պատանի թողնում է լնդ միշտ իր Հայրենի տունը և ձեռք առնում սրանդիխտութեան գաւազանը: Այս պատանին Արգարեանց տաճարի նախահայր՝ Արգարի երկրորդ որդի Յարութիւնն է լինում, ծնուած Նոր Զուգայում 1779 թուին:

Հասնելով Բուշեր, մի առ ժամանակ մնում է այնտեղ և գոհանում մանր առետրով: Յետոյ աեղափոխւում է Բօմբէլ և մի հայ վաճառականի մօտ ծառալութեան մտնում:

Յարութիւն Արգարեանը ի ընէ խոհեմ և աչալուրջ մէկն լինելով, յաջողւում է իր հաւատարիմ և տոկուն ծառալութեամբը սիրելի գաւանալ նոյն վաճառականի աչքում և զրաւել նրա ջերմ համակրութիւնը:

Ժամանակի ընթացքում, Հետզետէ ծանօթանալով Զինաստանի և Մանիկալի վաճառականութեան հետ, իրեն հովանաորող վաճառականի մահից լետով ինքը Յարութիւնն է յառաջ տանում նոյն գործը և պահում նոյն առետրական տան շարունակութիւնը:

1808 թուին իր փաքրիկ եզրայր Գրիգորին ևս տանում է մօտը Բօմբէլ և միացնում իր զործին: Իսկ 1830 թուին աեղափոխուում է Կալէաթտ և Հիմնում այժմեան «Արգար և Ընկ» լոյտնի առետրական հաստատութիւնը:

Յարութիւն Արգարեանը իր ժամանակին բացի նշանա-

ոոր Հայ վաճառական լինելուց, իր բեղմնաւոր կեանքի ամբողջ ընթացքումը ներկայանում է որպէս մի առաջինի մարդու և օրինակելի քրիստոնէի տիպար, բաւիս խօսքան նշանակութեամբ։ Նրա դուռը բաց է լինում բոլոր իրեն գիմազների, բոլոր Հայ կարօտաւորների տռաջ, մանաւանդ իր Հայրենակիցների, որոնք դժբախտաբար հարկադրուած էին լինում լքել իրենց տունն ու ընտանիքը նոր-Զուղայում և դիմել Հնդկաստան պանդխտութեան։¹⁾

Յարութիւն Արքարեանը չէ մոռանում նաև իր ծննդավարի՝ նոր-Զուղայի Մէլքան թաղի ո. Աստուածածին եկեղեցին, ուր մկրտուել էր և անց կացը լ իր մանկութեան ոսկի ժամերը, և պլարբերաբար նպաստում է նրա նորոգութեանն ու բարեզարդութեանը։

1843 թուին աղա-Յովհանջան Ելիտառեանի աջակցութեամբ, Յարութիւն Արքարեանը լիշեալ եկեղեցու բակումը հիմնում է «Հայկեան Հայ ենասիլ տկան» անունով մի դպրոց, որպէսզի նոր-Զուղայի Հայ պատանիները բարորավին անկիրթ չմնան, ալ զոնէ միջոց ունենան փոքր իշատէ ծանօթանալու կրօնագիտութեան, տարրական թուաբանութեան և Հայերէն ու պարսկերէն լեզուների հետ։

Սոյն դպրոցը ուղիղ քառասուն տարի որպէս առանձին Հաստատութիւն, իր զոյութիւնը պահպանում է և մի քանի սերունդ գրագէտ աշակերտներ արտադրում, Արա դրան ճակատին մինչև մեր օրերը մեացած ցուցանակի վերտառութիւնն է։

«Ով ոք կամի աշակերտիլ ի սմա,

Ի բերանոյն հեռի առնէ զտառ Զա»։

Յարութիւն Արքարեանը մէռնում է 1863 թուին 8 է

¹⁾ Մեղրով Աթեանի «History of the Armenians in India » էջ 127։

տարեկան հասակում և թաղւում Կալկաթայի Հայոց Նազարէթական ու եկեղեցում

1844 թուին Յովհաննէս Առւբէնեան առաջնորդը մի հոգեստ գպրոց է բաց անում, այն յուսով, որ Ամենափրկչեան ու վանքի միջոցներով և այլ պատահական նպաստներով կարող պիտի լինի կառավարել: Ատկան հաստատուն եկամուտ չունենալուն պատճառուվ, երեք տարի միայն գժուաբութեամբ պահուելոց լետոյ՝ փակւում է:

1847 թուին Բատաւիաբնակ մի անլայտ բարերարի նուիրաբերութեամբ Նոր-Զուզայի Գաւրէժ թաղի ո. Մինաս եկեղեցու գաւթումը մի գպրոց է բացւում ընդ գաստիարակութեամբ Տէր-Գալրիէլ քահ. Տէր-Միքայէլեանի, որ և կարճ միջոցից լետոյ էլ փակւում է: ¹⁾



¹⁾ «Ազգասէլ» 1847 թ. № 89:



Ժ. Ըստ գարի սկզբներում, Նոր-Զու-
ղալից Զաւա գաղթող Հայերի մէջ նը-
շանաւոր դիրք է գրաւում ազա. Գէ-
որդ Մանուկեան (Մանէչարեան) յախ-
նի վաճառականը, որ ժամանակի յա-
ջող Հանգամանքների շնորհիւ, մեծ
հարսութեան է Հասնում և Հոլոն-
դական կառավարութեան աչքում մեծ հոչակ վայելում:

Ազա. Գէորգը ողբացած երկու մանկահասակ քոյլ է ու-
նենում Նոր-Զուղալում Մարիամ և Թագուհի անունով, ա-
ռաջինը 14 տարեկան, երերորդը՝ 10 տարեկան: Եղբայրը
1795 թուին այս երկու քոյլերին տանում է Հնդկաստան
և բնակեցնում Մադրաս քաղաքում:

Մի քանի տարուց յետոյ, Մարիամն ամուսնանում է
Յակովը Յարսութիւնեանի հետ, որ և յետոյիր տիկնոջ՝ Մա-
րիամի և օր. Թագուհու հետ միասին տեղափոխում են
Զաւա ազա-Գէորգի մօտ:

Ազա. Գէորգն իր բարեգործութեամբ ևս յարանի անձ-
նաւորութիւն է լինում ժամանակին: Նա ի թիւս բազմա-
թիւ և բազմապիսի բարեգործութիւնների, մտադիր է լի-
նում Լոնդոնի մէջ մի «Ազգային համալսարան» կառուցանել,
որի իրականացման համար մի միլիոն ռու ֆի յատկացնելով, քա-
ռարդ գումարը փոխազրում է Լոնդոն և առաջութեցնում է այն-
տեղ Կառավարական դրամատանը, մինչև որ գործը սկսուի
և մնացած գումարն ևս հետզհետէ փոխազրուի: Սակայն

1827 թուրին անտգորոյն մահը վրայ հասնելով ամբողջ ծրագիրը տակն ու վրայ է անում:

Գէորգ Մանուկեանն իր մահից առաջ պատրաստում է և թողնում մի կտակ, որով հետեւեալ հիմնարկութիւններին ևս մասն է հանում իր ճոխ հարստութիւնից, այսպէս Առողիք

Երսւսաղէմի Հայոց ս.	Յակովբայ վանքին	10,000
Կալկաթայի Հայոց Մարդասիր. Ճեմարանին		30,000
Մադրասի Հայոց դպրոցին	•	30,000
Նոր-Զուղայի Սմենափրկչեան ս.	վանքին	10,000
Ն.-Զ.-ի ս. Կատարինեան կուսանաց վանքին		5,000
Ս. Էջմիածնի Մալր Աթոռին	•	25,000

Ընդամենը՝ 110,000 ս.

Վերջին գումարի տոկոսները երջանկայիշտակ Գէորգ Պ. կաթուղիկոսը յատկացնում է իր հիմնած Գէորգեան Ճեմարանին: *)

Աղա-Գէորգը անժառանգ լինելով, նրա մահից լեռոյ հարստութիւնը հասնում է երկու քոլը երին՝ տ. Մարիամին և օր. Թագուհուն: Արագ ևս իրենց հանգ. եղբօր բարի օրինակին հետեւելով, ազգասիրական և բարեգործական առատաձեռնութեամբ տռաջինն են լինում ամբողջ Զաւայում: Առանձին գույթ և խնամք են տածում գէպի կարօտաւորները, անանկներն ու պանդուխտները, որոնց համար իրենց առւնը դարձնում են ուղղակի ապաստանարան:

Թէպէտե մանուկ հասակում էին թողել իրենց ծննդավայրը՝ Նոր-Զուղան, սակայն ալնքան զօրեղ և ջերմ է լինում նրանց սէրը գէպի իրենց հալընիքը, որ Նոր-Զուղայում այն ժամանակները պատահած ամեն մի գժբախ-

*) «Արարատ» 1876 թ. № 9:

տութեան լուր խոր խոցում է նրանց սիրտը, մինչ այն աստիճան, որ նստում լալիս են անմիջիթար: Լսելով որ իրենց հայրենական տունն, ուր ծնուել ու սնուել են, ձախող հանգամանքների շնորհիւ ընկել է պարսիկների ձեռքը, շատպում են արժէքը փոխադրել, գնելու նոյն տունն և ընծալելու իրենց թաղի՝ Երևանի ո. Սարգիս Եկեղեցուն, Սակայն այս ցանկութիւնը մնում է միտյն ցանկութիւն և նոյն տունը մինչև մեր օրերը մնում է օտարազգի ձեռքում:

Վերին աստիճանի կրօնասէր և բարեպաշտ լինելով 1854 թուին Բատաւիայում իրենց ծախքով կառուցանում են ո. Յովհաննու Եկեղեցին, ուր ամեն կիրակի և տօն օրերին մի տուանձին ջերմեռանգութեամբ յաճախում են մասնակցելու Հայաստանեաց ո. Եկեղեցու ժամերգութեանն ու պատարագին, այն Եկեղեցու, որի ամեն մի ծէսն ու կանոնը նուիրական են Համարում և նրանց ճշտիւ կիրառութեանը խիստ բժախնդիր լինում: Եւ որպէսզի սոյն Եկեղեցին իրենցից յետոյ ևս շարունակէ իր գոյութիւնը և Զաւալաբնակ Նոր—Զուղաւեցի Հայերն մի ազգային տուն, մի Հանգըռուան ունենան, իրենց Հովակապ տունը նուիրաբերում են նոյն Եկեղեցուն, որի եկամտովը մինչև մեր օրերը նախանձելի վիճակում պահպանուել է և պիտի պահպանուի Զաւայի և շրջակալ կղզիների ցրուած Հայերին մի հօտ դարձնող միակ Հայկական Հաստատութիւնը՝ Բատաւիայի ո. Յովհաննու Եկեղեցին: Բայց սրանից, Նոր—Զուղաւի Եկեղեցիներից շատերն ևս նորսգուել ու բարեգտրգուել են դարձեալ այս Երկու քոլըերի նուիրառութեամբ ու նպաստներով:

Դրամական մեծ զոհաքերութեամբ նպաստում են Զաւայում Համտատուած «Հայկեան Միաբանութեանն», որի նպատակն էր Զաւայում գտնւող պանդուխտ Հայերին ընդու

Հանրապէս, իսկ Նոր-Զուղայեցիներին մասնաւորապէս խնամել ու հոգ տանել, ինչպէս և նըանց որբ ու չքաւոր երեխաներին կրթութիւն մատակարարել, նաև Նոր-Զուղայի Աղքատաց Արկղ» ընկերութեանն, որի շնորհիւ ցարդ բազմաթիւ տեղացի և գաւառացի չքաւոր ընտանիքներ խնամուել են ու խնամւում:

Կրթութիւնից զուրկ սոյն երկու քոյրերն, որոնք հազիւթէ գրագէտ կարող էին համարուել, հիանալի կրթասիրութեամբ են վերաբերում դէպի հայ մամուլն ու գրականութիւնը: Բաժանորդ են գրում իրենց ժամանակի բոլոր հայ թերթերին և մեկենաս հանդիսանում Հնդկաստանի մէջ լոյս տեսած շատ հրատարակութիւնների: Այսպիսով նպատակ են ունենաւմ նախ, քաջոլերել Հայոց հրատարական գործը և երկրորդ, բարի օրինակ ծառայել այն հարուստ Հնդկահայերին ու Զաւահայերին, որոնք ամեն բանի համար պատրաստ էին փող ծախսել, բացի գիր ու գրականութիւն տարածման գործից: *)

Զաւահայ գաղութի մէջ Հայ բարբառի յաբառեւութիւնն իրենց կէտ նպատակ ունենալով, 1855 թուին Բատակացում բաց են անում «Մանուկ և Յարութիւն» անունով մի դպրոց, որի համար գնում են 120,000 ռուփի արժողութեամբ մի կալուածք և նուիրում մի տուն: Այս դպրոցն շարունակում է մինչև 1872 թիւը, երբ համալնդի անտարբերութեան պատճ ուուվ ընդ միշտ փակում է և մինչեւ օրերը Զաւահայ գաղութը զրկուած է մնում հայկական դպրոց ունենալուց:

1853 թուին երկու քոյրերը կամենալով դէպի Նոր-Զուղան ունեցած իրենց բառան հայրենասիրութիւնը մի որ և է

*) Գ. Գասպարեանի «Լինսողը. երկուց բարեբարաց» էջ 5:

լիշտառակով յաւելքացնել, առաջնորդ Թագդէսս արքեպօ. Բէկնազարեանի միջոցով մի դպրոց են հաստատում նուև Նոր-Զուղայի Դաւթէժ թաղի ս. Մինաս եկեղեցումը, որ ուղիղ երեսուն տարի իր գոյութիւնը պահպանում է որպէս առանձին դպրոց և տարրական ուսումն աւանդում իրեն ապաստանող աշակերտութեան:

Օր. Թագուհին վախճանւում է 1856 թուին 71 տարեկան հաստկում, իսկ տ. Մարիամը 1864 թուին 83 տարեկան:



Հ. Խ. Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴՐԱՆ
* Հ. Հ. Պ. Ա. Պանիկան Բնութագիք
7/1. 1922



1840-ական թուժական թշութեամբ վաճառականների թւում յառաջադէմ է լինում և Մարգար Սուքիասեանը, որ նշանաւոր կալուածատէր է լինում Զպարայում:


Սա նոյնպէս իր բարեգործութեամբ յալտնի անձնաւորութիւն է լինում ժամանակին և 1853 թուին առաջնորդ Թագդէսս արք-եպիսկոպոսի յորդորներովը մի դպրոց է բաց անում Նոր-Զուղալի Յակովը Ճանեանց թազի և. Ստեփաննոս եկեղեցու բակումը (Սամեան դպրոցի տեղը), որ նոյնպէս երեսուն տարի պահւում է որպէս առանձին դպրոց և ժամանակի պահանջներին համապատասխան կը թութիւն մատակարարում:

1854 թուին Թէ հրանտքնակ Ալէքսանդրապօլիցի աղակարապետ Սառաֆեանց վաճառականապետը առաջնորդ Թագդէսս արք-եպիսկոպոսին տուած մի գրաւոր խոստման համաձայն, փափագ է յօւլիսում հազար թուման կտակել Ամենափրկչեան ո. վանքում 12 որդեգիր երեխաների համար մի դպրոց բանալու, ուր պիտի աւանդուէին հայերէն, պարսկերէն, ռուսէրէն, և ֆրանսէրէն լեզուները: Այս խոստումնագիրը հաստատվում և վաւերացնուում է Թէ հրանի Թութեապանատան կնքով և լանձնուում Ամենափրկչեան ո. վանքին: Սակայն կարճ միջոցից յետոյ աղակարապետը սնանկանում է և խոստումը մնում միայն խոստում:

1867 թուին Հնդկաբնակ ա. Շաղիկ Ցովսէփեանը (Շաղիկ-խաթուն) Նոր-Զուզայի ս. Ցովհաննու եկեղեցու սրտհումն իր հանգ. ամուսնու լիշատակին մի դպրոց է բաց անում «Քէորդ Ցովսէփեան» անունով, որ հինգ տարի միայն տևելուց յետոյ 1872 թուին փակում է: Որովհետեւ բոլոր քական միսիօնարները Անդլիերէն լեզուի համար միանալով սովորութիւնների դեմ բողոքներ են գրում Հնդկաստան դըպրոցի հիմնադրին, որ և նկատելով իր լումաների չարաշար գործադրութիւնը, դադարեցնում է դըպամի առաջումը:



Բացի լիշեալ դպրոցներից, զանազան ժամանակներում, մասնաւոր քահանաների տներում ևս լինում են փաքրիկ խալիֆարական դպրոցներ, ուր ուսումնածարաւ երեխանները լաճախում են փոքր ի շատէ գրել-կարդալ և եկեղեցական փոխեր սովորելու: Սակայն խեղճ աշակերտները աւելի ծառալի պոշտօն են կատարում, քան դպրոցական աշակերտի: Ամբողջ օրերով «վարպետի» համար են միայն աշխատում, ալգին ջրում, խոտ հնձում, պտուղ հաւաքում և փողոցները ընկած վաճառում, տունը տւելում: Իերակառը պատրաստում, երեխայ պահում ու քնեցնում, իրեր բազանիք տանում և այլն: Իսկ այս բալորից յետոյ, հազիւ թէ զրագէտ կոչւելու չափ ուսումն ստանում: *)



1880 թուին առաջնորդ Գրիգորիս արք-եպս. Ցովհաննիսեանի նախաձեռնութեամբ և Ամենամիրլիշեան ս. վանքի

*) Սոյն դպրոցների երեխներն են Տէր-Մատթէոսենցն ու Տէր-Մարգարենցը:

միաբան՝ Նոր — Զուղայիցի Խաչատրուք վարդապետ Կարապետեանի ջանացողութեամբ. Նոր — Զուղայից, Հնդկաստանից, Բլրմաստանից և Զաւայից Հանգանակած գումարներով, Նոր-Զուղայի Զարսու թաղումը հիմնարկւում է մի զպրոց, որի վիթխարի շինութիւնը մասամբ աւարտուելուց յետոյ, 1883 թուի Յունվարի 1-ին, արդէն գոյութիւն ունեցող երեք դպրոցները. այն է՝ Մէլգան թաղի ո. Ս.ստուածածնի եկեղեցու Յարութիւն Արդարեանի հիմնած «Հայկեան Հայրենասիրականը», Պաւրէժ թաղի ո Մինաս եկեղեցու տ. Մարիամ Յարութիւնեանինը և Յակովիչանեանց թաղի ո. Ստեփաննոս եկեղեցու Մարգար Սուքիանեանինը փակուելով միացւում են սոյն նորակառոյց դպրոցի հետ և կոչւում «Ա.Զ.-Գ.Ա.Յ.Յ. ԿԵԴԻՐՈՒՆԱԿՈՒՆ ԴՊՐՈՑ»: *)

Ապա Գրիգորիս արք-եպիսկոպոսը ներկայանալով հայաէր Նասէլէդգին. Նահին, տարեկան 100 թումանի մօստամարի է հաստատել տալիս Կեդրոնական դպրոցի համար, իսկ Խաչատրուք վարդապետը՝ Փէրիս գաւառի իր սեազհական Զիգան գիւղն ընծայում, որի մասին յետոյ դատ բացուելով, կէսն է միայն մնում դպրոցին:



*) «Մասիս» 1883 թ. Մայիս 21:



1800 թուականին Նոր-Զուղայում մի չքաւոր ընտանիքում ծնւռում է Մանուկ Յորդանանեանը: Նրա ծնողները աղքատ եին և դժուարութեամբ ձեռք բերում իրենց օրական պարենը՝ ջուլհակութեան արհեստով:

Մանուկը իր պատանեկութեան օրերը անց է կացնում Նոր Զուղայում, Հօրին օգնելով նրա պարապմունքների մէջ և պատրաստում Հօրից լետոյ շարունակելու նրա արհեստը՝ ջուլհակութիւնը:

Այս ժամանակները Նոր-Զուղայի այն շրջանն էր, երբ Ֆաթալի-Շահը Ժառանգելով պարսից գահը, թէեւ վերջ էր տռւել իր նախորդների օրով լատկապէս հայերին տանջելու համար ստեղծուած մի շաբք հարստահարութիւններն ու կեղեքումները, թէեւ բանութեան ճիրաններում խոշտանգուած Նոր-Զուղայի սակաւաթիւ հայերը սկսել եին կամաց կամաց զունչ քաշել և իրենց արդար վաստակի տէրը գառնալ, սակայն դժբախտաբար բռնութեան թողած պակասը ընութիւնն է շատապում լրացնել:

1815 թուին վրայ է հասնում «Սագրի» կոչուած սովը, որ ամբողջ երեք տարի է տեսում: Այս ժամանակամիջոցում, չքաւորութիւնն այն աստիճան հալում, մաշում է Նոր-Զուղայեցի հայերին, որ նրանց ուղղակի օրուայ հացի կարօտ է դարձնում:

1816 թուին տեղի է ունենում «Զամբօռների» կոչուած կոփերը, որ նոյնպէս բաւական թանգ է նստում Նոր-

Զուղալի հայերին:

Ահա այսպիսի մի գառն ժամանակ 18 տարեկան Մանուկ Յորդանանեանը երկար վարանումից յետոյ, վճռումէ օտարութեան մէջ բախտ որոնել և ժողնելով իր դժբախտ ծննդավայրը, գիմում է պանդխտութեան:

Նա գնում է ուղղակի Զաւա, ուր ա. Մարիամ Յալութիւնեանի եզրայը՝ աղա-Գէորգ Մանուկեանը գրկաբաց ընդունում է իր հայրենակից երիտասարդ Մանուկին, իր խնամակալութեան ներքոյ վերցնում նրան և վարժեցնում առեալրական գործի մէջ:

Մանուկ Յորդանանեանը հինգ տարուայ ընթացքում ըտականաշափ հմտանալով իրեն վիճակուած մասնագիտութեան՝ առևտրական գործերի մէջ, խնդրում է իր բարերար աղա-Գէորգից միջոց չնորհել իրեն առանձին գործելու, ինքնուրոյն պարագմանք ունենալու: Մանուկի խնդիրը յարգւում է և 1824 թուին նա գնում է Սուրբալիս:

Սուրբալիսայում, մի քանի տարուայ ծանր և անդուլաշատանքից յետոյ, Մանուկ Յորդանանեանին յաջողւում է վերջապէս ձեռք բերել մի պատկառելի անուն և հարստութիւն: 1835 թուից սկսած նա տէր է գառնում շաքարի մի գործարանի, որ նրա արդիւնաբեր աղբիւրներից մէկն է լինում:

1841 թուին Մանուկը հիւանդանում է և բժիշկների խորհրդով պարտաւորւում է գնալ Եւրոպա օգափսխութեան: Այս ճանապարհորդութեան ժամանակ, նա ի միջի այլաց ալցելում է և Վենետիկ՝ ս. Ղազարի կղզին. հանգիպում է ալնտեղ մեր բազմաշխատ և բազմերախտ Մխիթարեան հալրերին և ուսումնասիրում նրանց գործունէութիւնը, ամբողջ ուխտը իր սարք ու կարգով:

Մեր հարուստ վաճառականներին յատուկ են եղել յաճախ տարօրինակութիւններ, ընտորութեան հետաքրքիր ու բացառիկ գծեր: Մանուկ Յորդանանեանը՝ նոյնպէս անմասն չէ՝ լինում ալդ յատկութիւնից, բայց և ցոյց է տալիս մի շատ հաճելի և հազուագիւտ տարօրինակութիւն:

Դիւր է գոլիս նրան Աենեակի Միփթարեան վանքը իր Մուրատ — Ուաֆայէլեան դոլ ոցով և նա վճռում է չընդունել Վենետիկը որպէս լոկ ալյութեան արժանի մի եւրոպական վայր, այլ երկար կանդ առնել այնտեղ, մնալ այդ խաղաղ վանքումը և օգտուել ալդ պատմական կղզեակից: Մի խօսքով, նա ցանկանում է նորից մանկանալ և ուսում ստանուլ այնտեղ: Ուզուկը էլ անում է: Զուտի կեանքից զգուած Մանուկ Յորդանանեանը, 43 տարեկան հասակում աշակերտում է առ ոսս Հայոց Նահապետի՝ Նայր Ալիշանի և ըստ կարելոյն կրթուում նրանից, հաւանականօրէն գրաբար հայերէնի մէջ, ինչպէս ցոյց են տալիս նրա նոմակները: Ապա, Եւրոպայի բոլոր հշանառոր քաղաքները շրջագալեց լետոյ, վերագանուում է Սուրբայիտ և տեղափոխուում Բատուիա:

Մանուկ Յորդանանեանը բնաւորութեամբ լինում է շատ համեստ և սակաւապէտ, կրօնասէր, բարեպաշտ և նախանձախնդիր Հայաստանեալց Եկեղեցու սովորութիւններին: Նրա խօսակցութեան գլխաւոր առարկան և մտածողութեան միակ իգէալն է լինում ազգային Եկեղեցու բարդաւաճումն և իր ազգակիցների յառաջադիմութիւնը:

Նրա սրտին մօտ է լինում և իր ծննդավայրը՝ բազմակարօտ նոր-Զուղան, որտեղից բոլոր իրեն դիմուններին նպաստում է և օգնութեան հասնում: Բայց որպէսզի իր ազգականներին ու հայրենակիցներին ձրիտկերութեան չը-

վարժեցնէ և առ Հոստրակ վատ օրինակ տուած չլինի նըրանց, առաջնորդ Թագդէսս արքեպիսկոպոսին ուղղած մի նամակում ի միջի այլոց գրում է Հետևեալ բնորոշ տողերը.

« . . . Ես ոչ թէ զլանամ դոցա տարեկան ինչ յղել, այլ ցաւիմ, դի տորեկան տուրք ստացեալ, ամենին զաշխատանաց անփոյթ լինիցին, նոյն և անսեալ զաւաելք նոցին ուսանին այնպէս, անաշխատ մնձանան և լինին մուրացկան: Ճշմարիտն ասեմ, հասարակագէս ատեցող աշխատանաց են Զուղացիցիք, ականատես և ականջալուր եմ, քանզի գործել և աշխատեն արհամարհութիւն անձին համարին և դնոջ ժամանակին գատարկութեամբ անցուցանելո՞ւ պատիւ ինքեանց: Արդարեն ունին պիտոյս արոց աղքատք, այսինքն որբք, այրիք, պակասաւորք և ծիրացեալք, որք չունին կարողութիւն գործելու Բայց ասողջ և ասոյզ երիտասարդաց և կարող անձանց ձրի գրամ տալն յանցանք է, զի ծուլութեան և պղերգութեան ասիթ լինիցի նոցա և սերնդոց նոցին:

Որչափ առողջ կարծիք և ճշմարիտ դիտողութիւն:

Մանուկ Յորդանանեանը Հետաքրքրում է միաժամանակ և նոր-Զուղացի քաղաքական կեանքով և ուրախանում նրա անդորրութեամբ ու լաւաջագիմութեամբ:

Առաջնորդ Թագդէսս արքեպա, Բէկնազարեանն ի նըրկատի ունենալով, որ թէ և Նոր-Զուղան արդէն ունի տղայոց երեք դպրացներ, սակայն առ ի չգոյէ օրիորդաց դպրոցի, Հասարակութեան կէս մասը դեռևս մնում է կոյր և խարխափում է տղիտութեան խաւարի մէջ. ուտի 1857 թուին դիմում է Մանուկ Յորդանանեանին, մի օրիորդական դըպրոց Հիմնելու առաջարկութեամբ:

Մի զարմանալի զուգագիպութեամբ, Մանուկ Յորդանանեանը նոյնպէս ալդ միւնոյն ժամանակուերը մտածելիս է

լինում մի օրիորդական գպրոց բանալու մասին, լղացած է լինում նրա մէջ Նոր-Զուղայի իգական սեռին կրթութիւն տալու վեհ գաղափարը: Աւստի Առաջնորդի նամակը ստանալով և նրանում շօշափուած տռաջարկութիւնն իր սրտին մօս զգալով, 1858 թուին Նոր-Զուղայի ս. Կատարինեան կուսանաց վանքի ծոցումը Հաստատել է տալիս նոյն վանքի անունով մի օրիորդաց գպրոց, Հոգալով նրա բոլոր ծախքերը:

Յետոյ, իր Եւրոպա կատարած ճանապարհորդութեան ընթացքում, աեսնելով և զգացած լինելով, որ մի ազգի մը-տաւոր ու բարոյական յառաջադիմութեանը նապաստող գործօններից գլխաւորն մամուլն՝ տպագրութիւնն է, բաւտկան դումար ծախսելով մի մամուլ է ուղարկում իր Հայրենիքը՝ Նոր-Զուղա, որպէս նուէր Ամենափրկչեան ս. վանքին:

1858 թուի Օգոստոսին, առաջին անգամ բացւում է Նոր-Զուղայում Ս. Կատարինեան ազգային օրիորդաց զրայրոցը, յատկապէս իգական սեռի կրթութեանը նուիլուած մի Հաստատութիւն, որ ալդ ժամանակները բոլոր Հայաբընակ կենտրոնների համար կարելի է ասել, հազուագիւտ և խորթ բան է լինում:

Յիշատակութեան արժանի է Կուսանաց վանքի այն ժամանակուալ մալպետ կոյս Սանդուխտը, որ ընկնում է դռնէ դուռն և ծնողներին համոզաւմ իրենց տղջիկներին գպրոց ուղարկելու, ձրիապէս ուսումն ստանալու համար: Նրա ջանքերը մեծ մասամբ ի գերե են ելնում, որովհետեւ շատ ծնողների համար դեռևս տարօրինակ էր թւում օրիորդներին կրթութիւն տալը, աւելորդ, մինչ իսկ վնասակար էր համարւում աղջիկներին գրագիտութիւնը. «Աղջիկն որ գրել կարդալ սովորեց, կակսի ջահէլներին չիթի գըել և ուրիշ շատ բաներ դուրս կգայ»: Ահա համարեա բոլորի հա-

մոզմունքը, բոլորի հարեմական դատողութիւնը և այն թիւը
հասկացողութիւնը, որով սիրում են ամեն մի տգեղ վար-
մունք վերապրել կրթութեան, կապէլ գպրոցի հետ:

Ինչ որ է, բաւական նեղութեամբ ճարւում են 28 ա-
շակերտուհիներ: 1858 թուի Յուլիսի 27-ին կատարւում է
Օրինրդաց գպրոցի օրհնութեան հանդէսը և Օդոսոսի 1-ին
բացւում գպրոցը 28 հիմնադիր աշակերտուհիներով: Աշա-
կերտուհիները իրենց հասակի և պատրաստութեան համա-
ձայն բաժանւում են երեք դասերի և զետեղւում Կուսա-
նոցի սեղանատառն մէջ, որը ծառայում է որպէս առժամա-
նակեայ դասարան:

Յիշեալ թուականից շատ տռոջ ժամանակներում նոյն
պէս, երբ օրիսու գաց գպրոց ունենալու գողափարն անգամ
չկար, Նոր-Զուղարի իգական սեռի մէջ գտնւում են գրա-
գէտ անհաներ: Ամեն մի գրագէտ մայր գիտեցածը տ-
ւանդելիս է լինում աղջկան, սա էլ հերթին՝ իր աղջկանը
և այսպէս յաջորդաբար: *) Սակայն 1858 թուից սկսւում
է Նոր-Զուղարի ընդհանուր իգական սեռի կրթութեան
գործը, հիմք է գրւում այն վսեմ ձեռնարկին, որ կոչւում

*) Օրինակ, 1800-ական թուականների ծնունդ Ն. Զուղայեցի մի կին (տ. Սարբա
Դաւիթի լիսանեան) մասնուկ հասակում այնքան հայերէն է սովորած լինում, որ 1876
թուին թէհրանից իր աղջկան գրած նամակներում թողել է հետեալ տողերը:

ա) «Եղիդ-ջան, զրումաս որ ջանավամ գինչ, ոչ սրտով, մէրդ մեռն,
քո հասակի ինչ որ դու էղքան զարդ քաշես: Ազիզ սիրտդ ուրախ պահիր,
Աստուած քո ակին շատ պահի, քո եղբայրն շատ պահի, սիրտդ մի գնել,
Աստուած իշխանից չէ կտայ: Քո մարդն ու քո մին անձար եղբայրն դարի-
բութիւնում ան, բազ չգումի մի անել, նրանց համար լաւ չի: Վախտ-ըի
վախս սիրտ մի գանացնել, Աստծոյ վատն չգայ, միշտ սիրտդ ուրախ
պահիր, որ Աստուած էլ ուրախութիւն տայ: Բանկի փիքը առ անում, ընդուր
զինչ չես, փիքըն ջան կը կոտրի :

բ) «Ազիդ-ջան, Թաւրիդ զնալսւ լուրբ լուկաս տիրէլուս, ինչ անեմ,
եղբայր թողնեմ, զամ Զուղայ, օրն բոլոր նստեմ ֆիքը անեմ, տահմ ետրաբ

է «Կանանց դաստիարակութիւն», թէև չոփազ ոնց սահմանափակ ծրագրով և բիւտճէով:

Սակայն ինչքան էլ ողորմելի ծրագրով և բիւտճէով սկսուած լինի, այսու ամենայնիւ մեծ դարձ է եղել և աւելի ևս մեծանում է, եթք աշխի տուաջ ենք ունենուած ժամանակը, խաւար միջավայրն ու չոփազանց աննպաստ պայմանները:

1860 թուին աշակերտուհիների աւելանուալովը կտրիք է զգացւում գպրացի շենքը հետզետէ ընդարձակելու և նոր սենեակներ աւելացնելու. ուստի դիմում են դարձեալ Մանուկ Յորդանանեանին, ինդրելով նրա աջոկցութիւնը: Մանուկը յարգում է սոյն խնդիրը և անմիջապէս ուղարկում նոր նպատակ, սրով հնարաւորութիւն է տրւած գպրացի Հոգաբարձութեանը նոր սենեակներ աւելացնելու և նոր աշակերտուհիներ ընդունելու:


Մանուկ Յորդանանեանը բացի օրիորդաց գպրացի սահմանափակ բիւտճէն ապահովելուց, նպատակ է ունենում նաև՝ մեռնելիս իր ամբողջ հարասութիւնը կտակել նոյն գպրացին: Սակայն գժբախտաբար, նա իր կետնքի վերջալուսին ձախորդութեան է հանդիպում և սենեականում է: Այ-

տղիս Էն զարիք տեղն ինչ զարձաւ: Ազիզ, Առողջած պահի, զու մարդ ունես, տեղի բարեկամ ունես, առն ու տեղ ունես, զու ինքզ կտարեալ քիֆանի տա, կարող առ քիզ կտավարես, քա մարզավն, քս տանսին իրա ելնես: Առ քո մոտն չենիմ քեզ համար աւելի զանազանութիւն չունի, բայց եզրորդ մօտն չենիմ աշխատանքը կիշտնայ, զատի տէր չի ենել, Տէրն ոչ արած մի տեղն ցաւի, տէր-տիրական չունի, զարիք տեղն նաւզանին ջվանու կիշտնայ, Եզիզ ջան, այժմս ինեղբաւմաք քեզանից, որ մի տիրել վասն իս զնայն տա թուրիզ, թոզ զնամ, որ քո եզրայըն զարիքութեան մէջ չիշտնայ և ես մի միջոց սր սողամ, սրախ և զինջ տարեամ, իմ քաշած նեղութիւններն մոռանամ, և ձեռո տար ենի, շատ ունենամ, ամին ժամանակ էլ մին ձաղկով քիզ խոշ անեմ:

Ուշադիմակարիւն Խ. Արութեանի զայտքիլ սիին:

Նուամենախնիւ, նա չէ մսուանում եղածի մի մասը. կտակել ու Կատարինեան օր. գպրոցին և միւս մասն էլ՝ դարձեալ Նոր-Զուզլում հիմնուելիք մի Հոգեոր գպրոցի:

Մանուկ Յորդանանեանը մեռնում է 1879 թուին, 79 տարեկան հասակում:



1892 թուին նորեկ առաջնորդ Եսայի արքեպօս. Առաջնուածարեանը վճարելով Ազգ. Կեդրոնական գպրոցի պարտքը, աւաբառում է նաև նոյն գպրոցի Հսկալ շինութիւնը և սատրին գասարաններում հնուց մհացած գրաբար Հայերէնի տեղը մտցնում մայրենի լեզուի գառաւանդումը:

Յետով զգալով ժամանակի սպահանջները, և քաջ ըմբռանելով որ Մանուկ Յորդանանեանի կտակած գումարի տոկոսներովը ո. Կատարինեան օրինորդաց գպրոցը երկար ժամանակ չէ կարսղ իր գոյւթիւնը պահպանել, ուստի նիւթականալէս միացնում է նրան Ազգ. Կեդրոնական գպրոցի Հետ և անուանում «Նոր-Զուդայի ազգային երկիսոռ դրացցինը»:

Ոյս միացման բարեբար հետեանքն է լինում այն, որ խառն եկամուտից հնարաւորութիւն է տրւում մտցնել Օրինորդաց գպրոցում նոր առարկաներ և աւելացնելով նոր ուսուցիչներ, աշխատել ուսման մակերեսով որոշ չափով հաւասարեցնելու ազայս գպրոցի հետ:




Մինչև 1898 թիւը ո. Կատարինեան օր. գպրոցի աշակերտուհիներն հետպհետէ այնքան աւելացած են լինում, որ ինչքան էլ մեծ սենեակներն երկուսի են դարձնում, ինչքան էլ այս ու այն անկիւնում նոր սենեակներ աւելաց-

նում, դարձեալ Հնաբաւորութիւն չէ լինում բոլորին ամ-
փոփել միևնոյն գպրոցում։ Ուստի յարմար է դատւում օրի-
որդաց գպրոցին կից ս. Յովհաննու եկեղեցու բակի սենեակ-
ներն էլ ծառալեցնել դասարանների։ Բայց դարձեալ Հնա-
բաւոր չէ լինում, կարգապահութիւն չէ պահպանում, դա-
սախոսութեան համար անյարմարութիւններ են լինում, իսկ
տաք եղանակին ուղղակի անտանելի դառնում։

Այսպէս ուրեմն, դաստիարակութեան պահանջները, որ
ալժմ բաւական փոխուած և բարդուած էին, պահանջում
էին իրենց որոշ յարմարութիւնները, որոնց անհրաժեշտ էր
գոհացումն տալ։ Եւ տհա 1899 թուին Հոգաբարձութեան
նախաճեռուութեամբ և առաջնորդ Մազաքիս եպս. Տէրու-
նեանի ջանքերով բացւում է մի հանգանակութիւն, որին
բացի նոր Զուղալեցիներից, նպաստում են նաև Հնդկահա-
յերն ու Զաւահալերը և հաւաքւում է 4000 թումանաչափի
մի գումար։ *)

1900 թուին, Մանուկ Յորդանանեանի հիմնած գպրոցի
42-րդ տարում, կառուցւում է ալժմեան «Ա. ԿԱՍՍԻՒՆԵԱՆ
ՕՐԻՈՐԴՅԱՅ ԳՈՐԾՅԱՅ» որի դահլիճում փակցնեում է մի
մարմարեալ տրձանագիր Մանուկ Յորդանանեանի անունով,
որպէս յիշատակ նոյն գպրոցի նախկին հիմնադրի։ Իսկ Օրի-
որդաց նախկին գպրոցը իր ամբողջ կազմով, իր բոլոր սարք
ու կարգով Կուսանաց վանքի նկազմներից փոխադրւում է
այս նոր կառուցուած տռանձին գպրոցը։



*) Հնդկաստանի, Զաւայի և Բյուտոստանի նպաստները համեմանակում են Տէր
Պատկ խաչ, քան, Յակովիչանցի ձեռքով։

1908 թուին ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի հաստատութեան 50-րդ տարին լրացած լինելով, առաջնորդ փոխանորդ հ. Բագրատ վարդապետ Վարդագալեանն ի նըկատի ունենալով այն հանդամանքը, որ օրիորդաց դպրոցի դրամագլուխը մի շատ ողորմելի բան է, մտածում է տանել 50-ամեայ լոբելեանը և առիթից օգտուելով՝ հանգանակութիւն բաց անել մի «անձեռնմխելի դրամագլուխ» գոյացնելու յօգուտ նոյն դպրոցի:

Հ. Բագրատ վարդապետի ծրագիրը յաջողութեամբ պըսակւում է: Մայիսի 25-ին շքեղ հանդիսակատարութեամբ տօնուում է ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի օ0-ամեայ լոբելեանը *.) և «անձեռնմխելի դրամագլուխ» անուան ներքոյ նոր-Զուղարյան Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութեան ձեռքով և Հնդկաստանում ու Զաւայում վիճակաւոր քահանաների ձեռքով հաւաքւում է 5000 թումանտչափ մի դրամագլուխ:

Սոյն գումարով 1911 թուին առաջնորդ Առհակ արքեպո. Ալվանեանը թումանեանց Թէհրանի ներկայացուցիչ Ալէքսան-խան թունեանցի միջոցով, յաջողում է Զէլէսոլ-թանի որդի Զէլալէ-գովլէից Փէրիա գաւառի հայաբնակ Բոլորան գիւղը գնել նոր-Զուղարի Ազգ. երկսեռ դպրոցների անունով, որով դպրոցների բիւտճեկի վրայ տարեկան միջին թւով 1200 թումանտչափ աւելանում է:




*) «Նոր-Զուղարի Լիաբեր» 1908 թ. № 5:

9.



Նոր-Զուղայի Հայ. Կաթօլիկաց վանքը
իր կրթուած վարդապետների շնորհիւ, սկզբից
ի վեր՝ ժամանակ առ ժամանակ ունենում է
փոքրիկ դպրոցներ թէ վանքումը և թէ դուր-
սը մտսնաւոր տներում: 1878 թուին հ. Յա-
րութիւն վարդապետ Առաքելեանի ջանքերով
կառուցւում է «Ա. Գրիգոր Լուսաւորիչ» անունով մի տղա-
յոց դպրոց և քիչ յետոյ էլ բացւում է օրիորդաց: Վերջինս
շատ կարճ կեանք է ունենում, որովհետեւ բաղկացած է լի-
նում միայն մի քանի կաթօլիկ հայերի աղջիկներից, որոնց
դուրս գալու հետ միասին փակւում է և դպրոցը: Իսկ
տղայոց Ա. Գր. Լուսաւորիչ դպրոցը տասնուհինգ տարի
պահւում է որպէս նոր-Զուղայում այն ժամանակ գոյու-
թիւն ունեցող միւս դպրոցների չափ կրթութիւն մտա-
կարարող մի հաստատութիւն և բաւական թւով էլ աշա-
կերտներ է ունենում տուաջները, սակայն Ազգ. Կեդրոնա-
կան դպրոցի կանոնաւորուելովը սկսում են աշակերտները
կամաց կտմաց նուազել, մինչեւ որ 1893 թուին բոլորովին
փակւում է: Երեք տարուց յետոյ նորից բացւում է, բայց
չուտով դարձեալ փակման դատապարտւում:



1903 թուին Հայ. Կաթօլիկաց պատրիարք Եմմանուէ-
լեանը թողնելով նոր-Զուղայի թեմը, վերջինս ընկնում է

Ուրմիոյ Լատին եպիսկոպոսութեան անմիջական իրաւուսութեան ներքոյ : *) Հետզհետէ գալիս են բաւական թւով վարդապետներ ու կոյսեր և իրենց ձեռքն առնում 1705 թուին կուսւցուած վանքն ու եկեղեցին։ Ապա բաց են անում ս. Գր. Լուսաւարիչ տղալոց գպրոցն և Կուսանոցում աւելացնում մի նոր՝ օրիորդաց համար։

Փրանսերէն լեզուն սովորելու նպատակով, միւս գլուխոցներից՝ զիխաւորապէս բողոքականաց մօտից սկսում են նախ կաթոլիկ ծնողների երեխաները և լետոյ հայերից կամաց-կամաց հաւաքուել նորաբաց գպրոցները։

Աշակերտ-աշակերտուհիների հետզհետէ բազմանալու շնորհիւ, անհրաժեշտ կարիք է զգացւում ձեռնարկելու նոր Ձինութիւնների։ Ուստի Կուսանոցի Ձինութեան վրայ աւելացրւում է մի երկրորդ լարկ, իսկ Վանքի պարտիզում մի երկարկանի նոր գպրոց տղալոց համար։ Սոյն գպրացի շենութիւնն աւարտելուց լետոյ, փակւում է ս. Գր. Լուսաւորիչ գպրոցը և իր ամբողջ սարքով տեղափոխւում ալստեղ 1906 թուի Օգոստոսի 20-ին։

Կաթոլիկ միսիոնարութեան արդի երկսեռ գպրացները իրենց լաջողութեամբ պարտական են վերատեսուչ հ. Ե. Գլուխութիւններուն գործունէութեան, որ բացի նոր Զուգայսում հաստատած երկսեռ գպրոցներից, 1911 թուից սկսած Սփահանում լատկուալէս պարսիկ ժողովրդի համար հիմնում է մի այլ գպրոց «Սէլթարէ-սօբհ» (Արտասեակ) անոնով։




*) «Հայոթիրթ» 1904 թ., № 83։

1876 թուին բողոքական միսիօնարները հաստատում են Նոր Զուղարքում մի տղայոց դպրոց, ուր անգլիերէն լեզուն սովորելու նպատակով սկսում են մեծ թւով երեխաներ յաճախիել։ Եւ իրաւ, մանաւանդ Դր. Հէնրու տեսչութեան օրով դպրոցը յառաջադիմութեան կողմից նախանձելի տատիճանի է հասնում և մի խումք կրթուած երիտասարդներ ընծալում Նոր Զուղարքին։ Սակայն յետով, կամաց-կամաց կորցընում է իր նախկին հմայքը, մինչև հասնում է մեր օրերը։

Տղայոց դպրոցի սկզբնաւորութիւնից քիչ լետով հաստատում են և մի օրիորդաց դպրոց, որ նոյնպէս ունենում է իր փառաւոր անցեալը, յատկապէս աշակերտութեան քանակի կողմից։

1905 թուից սկսած Միսիօնարութիւնն ընդարձակելով իր գոլծունէութեան շրջանը և միենոյն ժամանակ նպատակ ունենալով բուն պարսիկ ժողովրդի մէջ գոլծել, կամաց-կամաց կենտրոնանում է Սփահանում, հետեարար և սոհմանափակում է Նոր-Զուղարքի երկսեռ դպրոցները, մանաւանդ տղայոցը։

Սփահանում մտադիր են կառուցանել ի միջի տլլոց և մի բարձրագոյն դպրոց (կոլեջ), համապատասխան հոչակառ հիւանդանոցին։ Վերջինս իր մտրգատիրական ծառալութեամբ ուղղակի պատիւ է բերում Քրիստոնէական կրօնին, որի սկզբունքները տարտծելու կոչումն ունի Միսիօնարութիւնը։



Ասր - Պուղալի պատմութեան
մէջ «Վաճառականութիւն Զու-

դալեցւոց» գլխում 1:02 թուին ՄԵՃ.

ՄԵՒԹՈՆ թաղի «Խօջա-Նազա-
րէնց տասնակի» կոչ-

ուած մասում, իշլում է Սւետ Քանանեան մի վաճառա-
կանի անուն: Ենթագրուում է, որ սա ի թիւս բազմաթիւ
այլ գաղթականների, ԺԵՐԳ գարի վերջերին թողած լինի
Պարսկաստանը և գաղթած Ծուսաստանի զանազան վայրեր:
Ենթագրուում է նորնորէս, որ սոյն ազգաստհմի շառաւիզ-
ներից մէկն լինի և հանգուցեալ ԳԵՐԳ Քանանեանը, որ
ծնւում է Պղլարում 1834 թուին:

Գ. Քանանեանը նախնական կրթութիւնը ստանում
է Ստաւրոսլի գիմնազիալում, իսկ 1854 թուին մտնում է
Մոսկուայի համալսարանի պատմա-լեզուարանուկան ֆակուլ-
տէտը: Սլո թուականներին Մոսկուայում հայ ուսունողնե-
րի սահմանափակ շրջանում կազմուում է մի գրական ընկե-
րութիւն, որի նպատակն է լինում տալ ժողովրդին գիւրը-
բոնելի ընթերցանութեան զրքեր և այդպիսով զարկ տալ
նորածին աշխարհիկ զրականական լեզուին: Ընկերութեան
երեք հիմնադիր անդամներից մէկն է լինում ԳԵՐԳ Քանա-
նեանը, որի անուան և ազգանուան ոկզենատառերը գրտ-
նուում են նոյն ընկերութեան՝ «Գամառ - Քարիպա» ան-
ուան մէջ, որ և լետոյ դառնում է ընկերութեան աւե-
լի քանքարտառ անդամի՝ բանաստեղծ Ատքալէլ Պատկա-

նեանի կեղծանունը:

1858 թուին Գ. Քանտնեանը յաջողութեամբ աւարտելի պատմաբանական բաժանմունքը, պահում է նոյն համալսարանում որպէս ուսուցչապետ պատմութեան: Պատրաստուելով մագիստրոսական քննութեան, Քանտնեանը զբազւում է միաժամանակ և պատմութեան դասաւանդութեամբ: Այս առարկային հիմնովին տիրապետելը, խօսելու ձիրքը, մեղմ և հեղաշամբուր բնաւորութիւնը, ինչպէս և աշակերտների հետ վարուելու հմտութիւնը, միանդամից բարձրացնում են տաղանդաւոր մանկավարժին և նա շատ դասեր է ունենում Մասկուայի այն ժամանակուալ նշանաւոր դպրոցներում:

1861 թուին Լազարեան ճեմարանից հեռանում է բնիկ Նոր-Զուղայեցի՝ պլովիսոր Մկրտիչ Եմինը և նրա տեղը թափուր է լինում: Քսանհինգ-ամեալ Գէորգ Քանանեանի թեկնածութիւնն է դրւում և նա մտնում նոյն ճեմարանը վերահսկիչ պաշտօնով: Քսան տարուց յետով Գ. Քանանեանը նշանակուում է Լազարեան ճեմարանի տեսուչ և ալդ պաշտօնին անդաւաճան կերպով նուիրուած մնում է մինչև մահը:

Գէորգ Քանանեանը Լազարեան ճեմարանում 36 տարի պաշտօնավարելով, մացնում է մի շարք կարեսը բարեփախումներ և վերանորոգումներ թէ ուղղութեան, թէ ծրագրի և թէ շինութեան կողմից, որով յաջողուում է բարձրացնել նոյն ճեմարանի դիրքը, որ մինչեւ իր օրերը մօտեցել էր կորցնելու նախնական բնաւորութիւնը և իջնելու հասարակ դպրոցի:

Կատարեալ վստահութիւնը և յարգանքը դէպի դաստուների դորձունէութիւնը, մշտական պատրաստակամու-

թիւնը լսելու ամենքի կարծիքները, հակագիր հայեացքները հաշտեցնելու ունակութիւնը և պատահած պառակտումը մարեցնելու լատուկ տակտը Գէորգ Քանանեանին սիրելի են դարձնում Լազարեան ճեմարանի բոլոր ուսուցիչներին: Նրանցից ամեն մէկը աշխատում է խաղաղ և աշխալ, իմանալով որ կայ մէկը իր արժանիքը գնահատող և առ հարկին իրեն օգնութեան հասնող:

Գէորգ Քանանեանը իր ժամանակի սաների համար լինում է մի գթած և խնամող հայր: Նա ճանաչում է ոչ միայն ամենքին, այլ և այն շրջապատը, այն միջավայրը, որից գուրս էր եկել երեխան: Ընտանիքից և հայրենիքից կտրուած և հեռու օտարութեան մէջ ընկած գժբախտ երեխաները մի առանձին վստահութեամբ են մօտենում իրենց սիրելի տեսուչ Գէորգ Քանանեանին՝ իրենց կարիքներով և վշտերով, հաւատացած լինելով, որ անպայման կը վայելեն նրանից խորհուրդ և պաշտպանութիւն, սէր և համակրութիւն:

Գաղանի խորհրդական տեսուչ Գէորգ Քանանեանը այնքան տարուած է լինում Լազարեան ճեմարանով և այնքան նուիրուած է լինում դաստիարակչական վեհ գործին, որ ժամանակ չէ գտնում գրելու, թէև ունենում է տատջնակարգ գրական տաղանդ: Նրա տպագրուած աշխատութիւնների մեծ մասը վերաբերում է Լազարեան ճեմարանին և Տաճկահայութեան, որի ճակատագրով նա սկսում է հետաքրքրուել գեռ 18⁰⁵ թուին — Զէլթունցիների ապստամբութեան ժամանակ և որի նկարագրութեանը նուիրում է մի շարք լոգուածներ:

Անօրինակ չարիքը որ պայթեց գժբախտ տաճկահայերի գլխին և ռուս մամուլի մի քանի օրգանների թշնամա-

կան վերաբերմունքը գէպի հալերը, ստիպում են Գ. Քանանեանին մի ընդարձակ պատմական տեսութիւն զրել Ուստաստանի Ալէքսէլ Միխալովիչի և Պետրոս Մեծի ժամանակից հալերի հետ ունեցած յարաբերութիւնների վրայ և գրանով լուսաբանել Հայկական հարցը, սակայն անազորոյն մահը զրկում է նրան այս կարեսը տշխատութիւնն աւարտելու հնարաւորութիւնից և նա մեռնում է 1897 թուի Յունիսի 4.ին: *)

Գ. Քանանեանի մահուամբ Հայութիւնը կորցնում է մի անձնազոհ և աղջանդաւոր մանկավարժ, Լազարեան ճեմարանը՝ մի սրտացաւ և քրտնաշան տեսուչ, իսկ նոյն ճեմարանի աշակերտութիւնը՝ մի բարի, հոգատար և խնամազ հայր:

Գէորգ Քանանեանը մի իզձ, մի փափառք է ունենում, ալդ այն է, որ Հայաբնակ որ և է վայրում մի գպրոց հիմնէ. սակայն իրեն միայն յայտնի պատճառներով, ալդ բանը նրան չի յաջողում կենդանութեան ժամանակ:

1899 թուին տ. Վառփառէ Քանանեանը վճռում է իրագործել իր անմոռանալի ամուսնու ջերմ ցանկութիւնը: Իսկ որովհետեւ ալդ ժամանակ Գոլիցինեան Հայտկեր քաղաքականութեան շնորհիւ Ուստաստանում Հայոց գպրոցները փակուել են և հետեապէս նոյն տեղը մի նոր գպրոց բաց անելու մասին մտածելն անգամ աւելորդ էր, ուստի վճռում է այդ գպրոցը բաց անել Պարսկաստանի Հայաշատ քաղաքներից մէկում:

Թիմումներ են լինում տ. Քանանեանին Պարսկաստանի մի քանի կենտրոններից, խնդրելով իրենց մօտ բաց անել գպրոցը: Տիկին Վ. Քանանեանը առանձուում է, որտեղ ար-

*) Կր. Զանշեանի «Եղբայրական օգնութիւն» էջ 640:

գեօք հիմնել, որ թէ նպատակայարմար լինի և թէ անհրաժեշտաւթիւնն աւելի զգալի:

Երկար մտածելուց յետոյ, անձամբ դիմում է ս. Եջմիածին և սոյն կարեոր խնդրի առթիւ հայցում է Վեհ. Կաթուղիկոսին, որ բարեհաճէ որ և է պաշտօնով Մոսկուայում գտնւող Հ. Բագրատ վ. Վարդապարեանին ուղարկել Նոր—Զուղա, որպէսզի ուսումնասիրելով Պարսկաստանի հայությունակ կենտրոնները, ուր որ յարմար կըդատէ ըստ իր հայուղութեան, խորհրդատրէ իրեն իր ցանկացած դպրոցը հիմնելու:

1900 թուի վերջերին երջանկալիշատակ Խրիմեան Հայրիկի կոնդակով և յանձնարարութեամբ Հ. Բագրատ վարդապետը գալիս է Նոր—Զուղա որպէս Առաջնորդական փոխանորդ: Նա ի մօտով ծանօթանարով Նոր—Զուղայի տեղական պալմանների հետ և ի նկատի առնելով այն հանգամանքը, որ թէե ամենաշատ հայ աշակերտութիւն ունեցող վայրն է ամբողջ Պարսկաստանում, սակայն եղած ազգ. դպրոցները (այն ժամանակուայ) բիւտճէի խիստ սահմանափակ լինելուն շնորհիւ՝ անկարող պիտի լինին ժամանակի պահանջներին գոհացումն տալ, հետեւապէս ապագալում անկման գրութեան են հասնելու ի մեծ ուրախութիւն օտար մրցակիցների: Ուստի գալիս է այն եզրակացութեան, որ Նոր—Զուղան իր մի շարք տղագայնն հաստատութիւններով տնենայարմար տեղն է Պարսկաստանում Գէորգ. Քանանեան դպրոցը հիմնելու: 1901 թուի Հոգաբարձական ժողովներում մշակում է կանոնադրութեան գլխաւոր կետերը և գործի դրութիւնը մանրամասնաբար գեկուցանում տիկին Վ. Քանանեանին: Յարգելի Տիկինը բոլորովին վստահացած Հ. Բագրատ վարդապետի ցուցմունքներին ու հրահանգներին, ըն-

դունում է իր հիմնելիք գպրոցը բաց անել Նոր-Զուղայում, յատկացնելով հանգ. ամուսնու՝ Գէորգ Քանանեանի թողած 47,000 ռուբլի գումարը այդ նպատակին (40,000 իրեւ անձեռնմխելի գրամագլուխ, իսկ 7000 գպրոցի շինութեան համար):

Քանի որ Գէորգ-Քանանեան գպրոցը վերջնականապէս հաստատելու համար երկու կողմից գեռ կացին մի քանի կետեր, որոնք պիտի պարզաբանուէին, իսկ նամակագրութեամբ էլ գժուար էր լինում և գործը ձգձգւում, անհրաժեշտ է համարւում որ հ. Բագրատ վարդապետը վերադառնալ ո. Եջմիածին և Մոսկուա, անձամբ բանակցելու գպրոցի հիմնադիր ա. Վառվառէ Քանանեանի հետ, որ ցանկանում էր որ առաջ տեսնել իր նպատակը իրագործուած:

Որովհետեւ յարգելի Տիկինը ցանկութիւն է ունենում իր հիմնելիք գպրոցը ապագայում ընդարձակել, միջնակարգ գարձնել և գործնական զիտութիւններ ևս մացնել, ուստի համաձայնում է շինութեան համար յատկացը անհրաժեշտ 7000 ռուբլի գումարն աւելացնել: Իսկ Հոգարարձութեան յալտնած մանրամասն տեղեկութիւնների հիման վրայ՝ Մոսկուայում ճարտարապետի ձեռքով կազմել է տալիս ապագայ շենքի յատկագիծն ու նախահաշիւը:

1902 թուին Գէորգ-Քանանեան գպրոցի կանոնագրութեան զլիստոր հիմքերը մշակուում և Վ.Ե.Հ. Հայրապետից վաւերացրուում են Ս. Եջմիածնում Յունիս 6 թուակիր մի սրբատառ կոնդուլմենտ: *)

Նոյն թուի վերջերին հ. Բագրատ վարդապետը վերադառնում է Նոր-Զուղա, որպէս Առաջնորդական Փոխանորդ և

*) Հանդիսաւոր կերպով կարգացուած Նոր-Զուղայի Ա. Ամենափրկչեան վանքում Գեկտ, 22-ին:

միւնոյն ժամանակ թեմական վերտառեսուչ գպրոցների և Ներկայացնեցիչ տ. Վ. Քանանեանի: 1903 թուի գարնանը ձեռնարկւում է Գէորգ. Քանանեան մանկապարտէզի և երկդասեան գպրոցի շինութեան գործը և 1905 թուին աւարտւում է, մօտ. 11,000 թուման ծախսելով: *)

Այսպէս, 1901 թուից սկսած Գէորգ. Քանանեանի լիշտակին հաստատւում է Նոր-Զուղալում «ԳէՈՒԳ. ՔՍ. ՆԱ. ՆԵՍ. ԴՊՐՈՅՑԼ» և 40,000 ռուբլի գրամագլխի տարեկան 2000 ռուբլի տոկոսն ուղարկւում է շարունակաբար մինչև 1904 թիւը, երբ տ. Վ. Քանանեանը կանխաւ յալտնած իր ցանկութեան և Հոգաբարձութեան խնդրանաց համաձայն՝ բարեհաճում է ամբողջ գրամագլուխը փոխադրել Նոր-Զուղու Օրուայ թանգ կուրսով՝ ստացուած գրամագլուխը փոխանցում է ապարական գրամի և վրան աւելացնելով տոկոսի մի մասը լինում է 25,000 թուման, որ ապահովացրւում է Սփահանի Կայսերական բանքում:

1905 թուի Սեպտ. 26-ին շքեզ հանդիսաւորութեամբ կատարւում է գպրոցի բացման հանդէսը և Ա.զգ. Կեդրոնական ու ո. Կատարինեան գպրոցների աշակերտ-աշակերտուհիները մինչև Բ. գաստրանը տեղափոխւում են Գէորգ. Քանանեան գպրոցը, որ Հայրապետական սրբատառ կոնդակով լարգելի տ. Վ. Քանանեանի կողմից նուիրաբերւում է ազգին իր հոյակապ շինութեամբ ու 25,000 թուման գրամագլխով և միանում Նոր-Զուղալի Ազգային երկսեռ գպրոցների հետ:




*) Մոշն գումարի 1000 թումանովը զհւում են երկու տներ, չէնքի տեղն ընդունակելու համար:

ԱՊՆԴԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ



Ա Յ Թ Բ Ր



ԿՐՏԻՉ ՆՈՒԱՅՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈ-
ՍԻ ԵԽ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՅՆ Ա.ՍՏՈՒԾՈՅ
ԵՊԻՍԿՈՊՈՍՈՎԵՏ ԵԽ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Ա.ՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏԻՒՐՔ ՀԱՄԱԳԻ-
ԿՈՆ ՆԱԽԱՄԵՇՄԻ ԱԹՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵՄՆ Ա.Ա.Ա.ՔԵԼԱ-
ԿՈՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ա. ԿԱԹՈՒՂԻԿԵ ԿԶՄԻՊԱՆՆԻ

Տամք զայս կոնդակ հաստատութեան առ յապայն ի
գործադրութիւն յանուն Տ. Թեմակալաց վիճակին Պարսկ-
Հնդկաստանի, Փոխանորդաց նոցին, Առաջնորդական Խոր-
հրդաբանին Զուղայու, Թեմական Վերատեսչաց, Հոգաբարձ-
ռաց Դպրոցաց և համայն ժողովրդին հայոց վասն նորոդ
բացեալ Դպրոցին յանուն և ի լիշտակ ի Տէր հանգուցեալ
Դաղտնի Խորհրդական Դէորդայ Քանանեան:

Յիշատակաց արժանին՝ հիմնագիրն Դէօրդ-Քանանեան
Դպրոցին վիճակիդ՝ Պետական Դաղտնի Խորհրդական Դէօրդ
Քանանեան, իբրև ճշմարիտ հալ և իբրև հարազատ զաւակ
մօրս լուսոյ Ա. Էջմիածնի, զգացեալ զպարտու իւր առ

ազգն և եկեղեցին ի վերջին ամս իւր յանկացեալ էր բանալ Գալրոց մի ազգալին ի կարեռը կեդրոնի միում յաղաղս լուսաւորութեան, կրթութեան և գաստիարակութեան կարուաւոր հայ մանկաւոյն, յանձնելով զիրագործումն յանկութեան իւրոյ՝ տիկնոջ իւրում։ Յետ մահուան հանգուցելոյն, քարեպաշտուհի ամսուին նորին Գերազնւուհի տիկին Վառվառէ Քանանեան՝ իբրև հաւատարիմ աւանդապահ ամսունոյն իւրոյ և կատարող կամաց հանգուցելոյն, սրբութեամբ կատարեաց զփափագ ամսունոյն, տալով քառասուն եօթն Հազար ըուբրի յայն նպատակ։ Եւ ընկալեալ ի Մէնջ զհրաման և զօրհնութիւն ի գործ ձեւնարկութեան Գալրոցին՝ որոշեաց քանալ զալն ի Նոր-Զուղա, յանձնելով զայն հոգ և Հսկողութիւն Փօխանորդի Սուշնորդի վիճակիդ և միաբանի Մայր Աթոռուլու Հոգեշնորհ Տ. Բագրատ Վարդապատի Վարդապարեան։ Արդ՝ որ տուաք զհաւանութիւն մեր և զհաճութիւն յաղագս բացման Գէորգ-Քանանեան Ուսումնարանին ի քաղաքիդ Զուղալու լիրանեան աշխարհիդ՝ ընդ հովանեաւ Նորին Արեգակնավայլ Մեծութեան Մուզավֆարեդդին Եահնշահին և Յաջորդաց Նորին Խնքնակալացն Իրանի, պարտիս Մեր համարիմք սովին Հայրապետական Կոնդակաւ Հաստատել և տալ զծրագիրն Գալրոցին յանփոփոխ գործադրութիւն յասլագալին։

«ա). Մեծարդոլ տիկին Վառվառէ Քանանեանի յանկաւթեան համաձալն Նոր-Զուղալի կեդրոնական և յարմարաւոր տեղում պիտի կառուցուի նրա ամսունու թսղած դրամալ մի նոր շէնք «Գէորգ-Քանանեան» Գալրոցի համար։

բ). Ալդ Գալրոցի շէնքն լինելու է եկեղեցական սեփականութիւն՝ մահմէգականաց օրէնքի համաձալն վախփ։

գ). Գէորգ-Քանանեան Գալրոցի ոլտհալանութեան հա-

մար տիկին Վառվառէ Քանանեանը՝ ի լիշտատկ իւր ամուսնու Գաղտնի Խորհրդական Գէորգ Քանանեանի և նրա ցանկութեան համաձայն, նուիրում է քառասուն հազար բուքլի (40,000 ր.), որ թողել է իր ամուսինը այդ նպատակով, (բացի գպրոցի շենքի համար լատկացրած գումարից):

Դ). Գպրոցի պահպանութեան համար լատկացրած ամբողջ գումարը պիտի մնալ անձեռնմխելի գրամագլուխ Գէորգ-Քանանեան Գպրոցի անունով միանգամայն ապահով Պըրամատան մէջ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի, Հիմնագրի (իսկ մահուանից յետոյ Կատակալատարների) և Գպրոցի Հոգաբարձուկան մարմնի հսկողութեան և պահպանութեան տակ: Եթէ Հորի լինի այդ գրամագլուխը հանել մի գրամատանից և գնել Ոուստատանի կամ արտասահմանի այլ ապահով գրամատան մէջ և կամ գնել մի ապահով և շահաբեր կալուածք, այդպիսի բոլոր պատասխանտառ գործողութիւնները պիտի կատարուին Հիմնագրի (Կատակալատարների) և Քանանեան Գպրոցի Հոգաբարձութեան փոխագործ համաձայնութեամբ և Վեհափառ Կաթուղիկոսի թուլաւութեամբ:

Ե). Գէորգ-Քանանեան Գպրոցը առալժմ երկդասեան է (հինգ տարուալ գտարնթացքով), երկսեռ մանկապարտէզավ, իսկ ապագալում, երբ Գէորգ-Քանանեան Գպրոցի նիւթական միջոցները կըներեն, հետզհետէ պիտի բացուին յաջորդ գասարաններ և ա, և գառնալ միջնակարգ գոլրոց գործնական տուարկաններով:

Զ). Գէորգ-Քանանեան Գպրոցը առալժմ լինելով երկդասեան, ծառալում է իբրև նախակրթական մասն Նոր-Զուզալաւմ գոյութիւն ունեցող Վեգրոնական Գպրոցի, վերջինի հետ կառլ ունենալով ծրագրի միութեամբ և լաջորդականու-

թեամբ։ Գ.՝ Քանանեան Թպրոցը միշտ պիտի պահպանէ իր ինքնուրոյն գոլութիւնը։

չ). Գէորգ-Քանանեան Թպրոցը ընդ միշտ անփսփսխ պահելով իր անունը, գտնուելու է ազգիս Վեհափոռ Կոթուղիկոսի և Թեմական Սուտաջնորդի հոկողութեան և Հովանաւորութեան տոկ, բայց կառավարուելու է ընտրած Հոգաբարձուկան մարմնի ձեռքով։

ը). Հոգաբարձուկան մարմինը բարկացած պիտի լինի ութը (8) անգամներից, որոնք պիտի ընտրուին Նոր-Զուղալի եկեղեցիների ծխականների կանոնաւոր ժողովում, որ կայտնալու է Թեմական Սուտաջնորդի նախագահութեամբ։

լ). Հիմնադիր տիկին Վառվառէ Քանանեանը պատուառը Հոգաբարձուհի է Գ.՝ Քանանեան Թպրոցի։

ժ). Տիկին Վառվառէ Քանանեանը իրաւունք ունի ընտրել և նշանակել Փոխ-Տեսուչ Գ.՝ Քանանեան Թպրոցի համար՝ իւր և գալրոցի Հոգաբարձութեան վոխագարձ համաձայնութեամբ, իսկ նրա մահուանից յետով՝ Կտակակատարների և Հոգաբարձութեան։

ժա). Ի նկատի ունենալով, որ Գէորգ-Քանանեան Թլպրոցը ընականաբար շատ մօտ կըլինի Հիմնադրի սրտին, Հոգաբարձութիւնը իր պարտքը կըհամարի միշտ խորհրդակցել նրա հետ այն ամեն կարեւոր խնդիրների մասին, որոնք կարող են նպաստել Գ.՝ Քանանեան Թպրոցի բարեկարգութեանն և բառաջադիմութեանը ըստ ուսումնականի և ըստ անտեսականի։

ժբ). Հոգաբարձութիւնը ընդհանուր լինելով՝ Նոր-Զուղալի երկսեռ գալրոցների համար, իւրաքանչիւր ուսումնական տարագերջին, ինչպէս Գէորգ-Քանանեան Թպրոցի, նոյնպէս Զուղալի միւս Թպրոցների հաշիւները պիտի տպագրի

և ներկայացնի Ազգիս Վ. Եհավոս. Հայրապետին, Առաջնորդին
և Հասարակութեան ի քննութիւն։ Այդ հաշուի հետ միա-
սին Հոգաբարձութիւնը պիտի ուղարկէ Գ. - Քանանեան Պրա-
րոցի մանրամասն հաշիւները և ուսումնական տեղեկագիրը
տիկին Վ. առ. վառէ Քանանեանին։

ԺԴ). Առաջնորդական Փոխանորդ և Պալրոցների Վ. Երա-
տեսուչ Տ. Բագրատ Վ. արդապետ Վ. արդապարեանը լինելու
է ներկայացուցիչ Հիմնադրի կողմից և ունենալու է ձայն
Հոգաբարձական ժողովում. իսկ նորա բացակայութեան ժա-
մանակ, Հիմնադրի տիկին Վ. առ. վառէ Քանանեանը իրաւունք
ունի ներկայացուցիչ ընտրել Հոգաբարձութեան անդամնե-
րից մէկին և կամ որ և է ձեռնհաս անձին Զուղացից։

ԺՇ). Գէորգ. Քանանեան Պալրոցը, ինչպէս և Զուղացի
միւս գպրոցները միշտ գրուած պիտի լինին ազգացին գօրեղ
Հիմքերի վերալ և կտզմակերպուած ժամանակակից մանկա-
վարժական պահանջների համաձայն։

ԺԷ). Գէորգ. Քանանեան Պալրոցը հետզետէ վերածելով
միջնակարգի, ծրագրի մէջ (բարձր գասարաններում) պիտի
մացնել գործնական գիտութիւններ (արհեստագիտական, առ-
ելորական, և երկրագործական բաժինով տեղական պայման-
ների համաձայն)։

ԺՊ). Գէորգ. Քանանեան Պալրոցում, ինչպէս և Զուղացի
միւս գպրոցներում, Հայոց լեզուն, Հայոց պատմութիւնը,
Հայոց գրականութիւնը և Հայոց եկեղեցական պատմութիւ-
նը անհրաժեշտ առարկաներ պիտի լինեն։

ԺԸ). Գ. - Քանանեան Պալրոցում ըոլոր առարկաները պի-
տի գասախօսուեն Հայոց լեզուվ, բացի օտար և Պետական
լեզուներից։

ԺԾ). Ն. - Զուղացի գպրոցները կունենան մի ընդհանուր

Տեսուչը (Հոգաբարձական ժողովի ընտրութեամբ). իսկ Քառանիեան Պալրոցը առանձին փոխառություն ուրսնք պիտի լինին Հայ Լուսաւորչական:

ԺԵ. Տեսուչը Գ.-Քանանեան Պալրոցի վերաբերմամբ կարգադրութիւն անում է անպատճառ փոխառություն հետ խորհըդակցելով և նրա միջոցով:

Ե). Տեսուչը Հոգաբարձական ժողովի անդամ է և ունի մի ձայն, իսկ երբ խնդիրը վերաբերում է Քանանեան Պալրոցին, փոխառություն ևս ներկայ պիտի գանուի Հոգաբարձական ժողովին նոյն իրաւունքներով:

ԻԱ). Բոլոր ուսուցիչները պիտի ունենան լարձակովներմ միջնակարգ կրթութիւն և լինին Հայ:

ԵԲ). Տեսուչը, փոխառությունը և ուսուցիչները իրեն ժանկավարժական մարմին՝ անկախութիւն պիտի ունենան կըրթական և մանկավարժական խնդիրներում, անշաւզա զեկավարուելով գործադրելի համար մշտկութծ ծրագրով և կանոնագրութեամբ, որ վաւերացրած կլինի Ծալբագովն Հոգեարիշանութեան կազմից:

ԵԳ). Եթէ ապագալում պայմանները փոխառություն հարկ լինի փոխադրել Գ.-Քանանեան Պալրոցը և Զուղալից՝ Հայաստանի մի որ և է բազմահայ լարմարաւոր կեդրոն, ալգալիսի դեպքում այդ որոշումը պիտի կարանու Ա.Ե.Հ. Կալեուզիկոսի, Կատակալատարների և Հոգաբարձութեան փոխադարձ համաձայնութեամբ:

ԵԴ). Ամեն տարի Սեպտ. տմսին Ա. Գէորգ. Զօրավարի տօնին պիտի մատուցանել պատարագ ի լիշտատկ հանգուցեալ Գէորգ Քանանեանի և կատարել Հոգեհանգիստ և Զուղալի Ամենափրկչեան Ա.անքում, կամ Ա. Գէորգալ Եկեղեցում, ուր ներկայ պիտի, լինեն Քանանեան Պալրոցի ուսուցիչներն ու աշակերտները:

իւ). Հիմնագիրը (կամ Կտակակատարները) իրաւունք ունի ուղարկել մի ներկայացուցիչ՝ անձամբ մօտից ծահօթանալու համար Գ. - Քանանեան Պալրացի հետ և զեկուցանելու ։

Հաստատելով զիերոյգբետ ծրադիր, Մեք լիտլու եմք, զի Գերատատիւ. Աթառակալք Ն. Զուզային, Բարեշնորհ Փախանորդք, Խորհրդարան Առաջնորդարանիզ, սրբէոն Հոգաբարձուք և Տիսուչք սեպուհ պարտիս ինքեանց համարեացեն սրբութեամբ և անթերի կատարել կէտ առ կէտ զրօդուածու ծրագրին, որ ի Խոնդակիս, առ ի արդիւնաւոր և լուսատե կացուցանել զզպացն ըստ ցանկութեամն ազգասէր հիմնագրին և բարեպաշտու հի տիկնոջ, որ ունի հասաւասապէս զգիտաւորութիւն բնդարձակելու զայդ հաստատութիւն, ապահավելով նորանոր նուիրտառութեամբ լիւրմէ կոզմանէ ի պէտա գործնական զիտելեաց, նախանձելի լուս հալ ազգին հանգիսացուցանելով, որով և փառաւորեացին Հոգիք հիմնագրացն յերկինս և օրհնեացին լիշտակք նոցին լոզգաց լազգու։ Եւ Մեք մազթելով ի Տեառնէ զհանգիստ հազւոյ հիմնագրին և արկ շատութիւն զերազնւու հի տիկին Վառվառեալ Քանանեան՝ իրագործովի զկամս ամուսնոլն, ազօթեմք, զի Տէր Ստուած լրտեալ պահպանեացէ զայդնոր ուսումնարանգ փառն ազգիս մէրով և փոքրիանց մերազնէից զօրացուցէ Փրկիչն զաշխատաս սրս և զվաստակաւոս, զհոգաբարձուու և զինուամակալու ազգալին հաստատութեանդ ալդորիկ։ Յիշտատուն արդորաց օրհնութեամբ լիշեացին, և օրհնութիւն Աստուածալին հանգերձ պահպանութեամբ Սջոյն Ս. Լուսուարչին ի վերալ հաստատութեանց եղիցի, ամէն։

Մ Կ Բ Տ ի Զ

Կարուղիկոս Ամենայի Հայոց

ի 6 Յունիոի 1902 ամի


և ըստ Տումարիս ԱՅԾՈՅ.

ի Հայրապետաթեան Մերում թ, ամի,

Արքարանեան Մայր Աթառ Ս. Եղմիածնի. —ի վարչաբարձրապատ թ, 871

Կոմիտասի Հայութեան մէջ իր բարեգործութեամբ յայտնից Ազնւու հի տ. Վառվառէ Քանանեանը Նոր-Ջուղալիկ Դէսրդ Քանանեան գպրոցի հետ միտժամանակ հ. Յագրատ վ. Վարդագարեանի միջոցով բարեհաճում է Հիմնել Փէրիա գտուուի Նամակերտ գիւղում և մի գիւղական գպրոց «Յովնանական» անունով ի լիշտատիկ իր ծնողաց. Սոյն գպրոցի շինութեան համար ևս նուիրաբերում է 800 ռուբլի. ստկայն սովորեաւ ալդքան գումարով հազիւ հնարաւոր է լինում մեծ Ծրագրով Հիմնած գպրոցի շինութեան կէսր միայն աւարտել, ուստի ո. Ամենափրկչեան վանքի միարան և նայն գտաւասի հոգեոր հովիւ՝ հ. Եղնիկ վ. Երկարակեցեանն աշխատում է գիւղացիներից Հանգանակութեամբ և զանազան աղբիւրներից Հոգալով լրացնել Հոկայ շինութիւնը, որ ալսօր պատեւ է բերում նայն գտաւասի Հայութեան և միւնայն ժամանակ ծառալում է իրին. Փախանորդարարն թեմիս Հոգեոր իշխանութեան Փէրիալի ներկայացուցչի:

Իսկ յարգելի Տիկինը նոյն գպրոցի գոյութիւնը պահպանելու համար յատկացնում է 4000 ռուբլի, որ ապահովացրում է Եզր. Թուժանեանց Թէհրանի առեարական տանը և որի եկամտով կառավարուամ է Յովնանեան գպրոցը: *)



*) Տիկին Վ. Քանանեանը Նոր-Ջուղայի և Գ. Քանանեանը և Կամակերու գիւղի Յովնանեան գպրոցների զայտիթիւնը ապահովիրուց զառ, հայսմ է և նրանց բարեգործութեան մասին, ուղարկելով սեղան-նստարանների ու կան-կարուինների ձախրինը և նուիրելով զանազան իրես-մազական-լապահ, եթիւպունդ, թանկազին զրբեր, հանգ. Գ. Քանանեանի, հ. Յալբար գարգապեամբ և իր մեծադիր պատկերները, մանկուողաբույզի նիւթեր-խաղալիքներ և այլն:

1900 թուին առաջնորդ Մազաքիա եպօ.

Տէրանեանը Ա. Կատարինեան օրիորդաց զըստ-
րոշի հետ միասին ձեռնարկում է և մի Հոգեոր գի-
շերօթիկ գոլրոց բանալ Ամենափրկչեան ո. վանքի ծո-
ցումը, լատկապէս գիւղացի քահանալացու պատանի-
ներին ձրիութար կրօնական կրթութիւն տալու հա-
մար: Այս իսկ նպատակով հանգանակում է մի հազար թու-
ժանաչափ զումար և իր ձեռնարկի մասին տեղեկագրում ո.
Եջմիանցին:

Հոգելոյն Խրիմեան Հալիբիկը խորհրդատրում է ի միջի
ովոց և հետեւեալը.

«Երբ իբրև զիշերօթիկ բնդունուին գեղացւոց մանուկ-
ներ, անշուշտ քաղաքացւոց աղքատ մասն կամ զանուած
որբերն եւ պիտի սափալութիք բնդունել, որով երթալով կը
ծանրաբեռնի գոլրանոցի վիճակը և անհնարին կրդանաց շա-
րունակել: Արդեօք կարելի կրլինի որ զիւղացի աշակերտ-
ներ քաղաքացւոց աներ պատասխարուին, զիւղացիք նոցա
հաց և ուրիշ պարկներ հոգան. եթէ լաջողի այս բան, յայն-
ւամ դեղացիներէն առելի աշակերտ կարելի է բնդունել:

Ես խորհուրդ կռատամ Զեզ, որ այդ գորբանոց զիշերօ-
թիկ չը լինի, վասն զի փորձասութեամբ զիտեւ թէ քանի
զժաւարին և տաժանելի է և բարոյապէս ես օպաակար չէ:
Դժուարութեան բոլոր հանդամաններ պէտք է խելամառու-
թեամբ կշռէք և առա ձևնարկէք ի գործ. յուշ անեմ Զեզ
և եւարանի հայտահաշույն առակը թէ «այրու այս սկսա-
տանել և ոչ կարաց կատարել»: Լաւագոյն ես է զիւղացի
աշակերտաց համար մասնաւոր վճարումներ անել և քաղաքի

մէջ գանուած համեստ և պարկեշտ ընտանեաց յանձնելի պահ, քան թէ աւելի եռ ծախսելով զիշերօթիկի մէջ պահել » :

Մաղաքիտ եպիսկոպոսը իր Հանգանակած Հազար թուժան զուժարը տպահովացնում է և Առնքի գուժուժ փակցնում «Հոգեոր զպրոցի» անունով մի արձանագիր, ու պագալում նման մի զպրոց բանալու լուսավ, իսկ ինքը Հեանում նոր Զուղալից:

1901 թուին Ազգ. երկսեռ գլորցների Հոգաբարձութիւնը բարձր գասարանների աշակերտաներին զրսի ազգեցութիւնից իսպառ հետացնելու նպատակով, Ազգ. Կեդրոնական գլորցի երկրորդ լորկի սենեակներումը բաց է անում 14 Հոգուց բազկացած մի զիշերօթիկ զպրոց, որ երկու առբի միայն տեսլուց լետով աշակերտաների սակառնութեան պատճառով փակւում է:

1907 թուին Հոգեոր Քշիանութիւնը Ազգ. երկսեռ գլորցների Հոգաբարձութեան չետ միասին Մաղաքիտ եպիսկոպոսի Հանգանակած և ապահովացրած գուժարի տոկոսները միացնելով Մանուկ Յորդանանեանի նոյն նպատակով նախապէս կատակած դրամագլուխի տոկոսին, որոշում է բաց անել Հոգեոր զիշերօթիկ զպրոց, բացառապէս զաւառներին զարգացած քահանաներ և ուսուցիչներ տալու գիտաւորութեամբ:

Սակայն, որովհետեւ Առներումը բարմարաւոր շէնք չըկար, ուստի նոյն Հոգեոր զիշերօթիկ զպրոցը զետեղւում է Ազգ. Կեդր. զպրոցի երկրորդ լորկումը, ուր մի անգամ ևս զիշերօթիկ զպրոցի փորձ եղել էր որդէն բարձր գասարանների աշակերտութեան Համար: Այսպէս 1907 թուին 20

Հսդուց բազկացած գաւառացի տշտկերտների համար բայց ևս է գպրոցը, որ և տակաւին շարունակւում է:

Բատաւիալի Հայ ազգային հաստատութեանց վարչութիւնը սկզբանքային տեսակէտից գէմ լինելով գաւառացի տշտկերտների գիշերօթիկ պահելուն, և ցանցանալով հանգ, Մանուկ Յաղացանեանի կտակը տառալի կերպով գործառ գըրբուծ տեսնել — ալն է, ունենալ մի գպրոյ, ուր կըթուին միայն այնպիսներ «որպէս արգէն առ արտել են գպրոցական կեանքն և փափագ են լոլտնում հսդեսրական ուսում ստունալու և քահանալ գտնենուուր համար», 1913 թուից անորոշ ժամանակով զագարեցնում է լիշեալ բարերարի կտակած գումարի տոկոսների տուաքումը: *)

Առաջնորդ Սահակ արքեպոս, Արքատեանը հսդեռը գըրբուցի անունով եղած զումարներով զագօրոք Խոլգան և Բոլորան Հայ գիւղերից մի մասն զնած լինելով, Հսդեռը Իշխանութիւնը հնարաւորութիւն է ունենում լիշեալ կալուածքներից զուացած արգիւնքով գեռ պահպանել Գիշերօթիկ գպրոցի գոյութիւնը, սահմանական լոկ թւազ տշտկերտներ ընդունելով, միջոց ունեցաղներից մասնաւոր ծախք վերցրնելով և գպրոցը փախաղելով ո. Ամենափրկչեան վանքը:

—————
Հնդկաբնակ հարուստ նոր-Զուղարեցիները ի գէմս պարսկալք Ոէթ Պօղոսեանի և Պետրոս Արքանի, վերջերս ցանկութիւն են լալտուել և բանակցութեան մէջ են, ինչինչ պալմանեերով իրենց հայրենիքի՝ նոր-Զուղարի Ոզզ, երկսեռ գպրոցներին լատկացնել մի պատկառելի գումար, որով հնարաւոր լինի Ոզզ, Կեգրանական զորոյն ամբողջովին զիշերօթիկ գարձնելու:

*) «Տեղեկագիր Արք, Հայ ազգ, հաստատութեանց Բատաւիայ» 1912 թ., էջ 12:



1905 թուին Ազգ. երկուս գլուց բացների Հոգաբարձութենը նկատելով որ Նոր-Զուղարի պէս մի տեղում չկան ալնալիսի շահաւետ գործեր, որոնցով կարելի լինի ապրուստ հալթալիթել. սրոշում է հիմնել մի կանոնադրություն՝ «Արհեստագիտական դպրոց», որտեղ հնարժությունի զանազան անհրաժեշտ արհեստներ սովորեցնել կատարելողործուած ձեռվ և ալգալիսով մոլորդի անտեսական քալքաբուած վիճակը սրոշ չափով բացուաքել:

Եթե գործի սկզբնաւորութիւն, Ազգ Կեղրանական գլուց բանում է Կօշկակարանաց, վարձում է մի վարպետ կօշկակար և արտասահմանից բերել է տալիս անհրաժեշտ գործիքներ ու նիւթեր: Նախնական ծախքերը և արհեստաւորի սաճիկը հոգալու համար՝ սրոշում է ամսական նպաստներ սահանալ Նոր-Զուղարի եկեղեցիներից ու Ազգ. հաստատութիւններից, Բանում է նաև մի կազմատուն: *)

Կալկաթալի «Արգար և Ընկ.» անդամներ՝ սլաքանալք Յարութիւն Գր. Արգարեանց և Արգար Ալէքս. Արգարեանց ի նկատի անենալով այն հանգամանքը, որ Նոր-Զուղարի տղաների մեծ մասը իրենց բնագաւառում գործ ու աշխա-

*) «Տարհառ և Արք. ակնկալիքից 1905—1906 թ. էջ 24:

ատնք չը գտնելուն պատճառով, Հնաւանդ սովորութեան համաձայն միշտ զաղթում են Հնդկաստան, մտածում են Նոր-Զուզալիցի պատահիներին պիտանի արհեստներով կապել իրենց ծննդավալրի հետ, որով և օտարների հետ ձուլուելու առաջն առնել։^{*)}

Այս իսկ նպատակով 1906 թուին իրենց նոխահօր հաստատած «Նոր-Զուզալի Հայկեան Հայրենասիրական գպրացին» (Էջ 10) բարկացրուած գրամագլուխի վրայ նոր նպաստ աւելացնելով՝ 37,000 ռուփի են կտակում և Նոր-Զուզալի Ազգ, Ազգականական գպրացում մի Արհեստագիտական բաժանմունք բաց անում, անուշնելով նրան «Նոր Հայկեան Հայրենասիրական ձրի արհեստագիտական գպրաց»։

Սոյն գումարի տոկոսներով նախ ընդարձակւում են Կօշկակարանոցն ու Կազմատաւնը, տպարտացում Զաւհականոցի, Երկաթագործարանի և Խառատանոցի բաժանմունքները, Կազմատաւնն ու Խառատանոցը հետզհետէ փակւում են աշակերտ չունենալու պատճուռով, յետով փակւում է Երկաթագործարանն՝ գարձեալ նոյն պատճուռով։ Իսկ Կօշկակարանոցն ու Զաւհականոցը տարեցտարի ճսիանում են, աշակերտներ արտագրում և յուստից ապագայ խոստանում։



Բացի «Արհեստագիտական Գպրացնից, Արդար և Ընկերութիւնը ապահովում է նաև երկու ֆօնդ «Ողորմութեան Աւանդ» անունով՝ հանդ. Աէժ, Յարաւթիւն և Գրիգոր Արդարեանցների լիշտատակին, որոնց տոկոսներով տարեկան

^{*)} «Նոր-Զուզալի Լուրիկ» 1906 թ. № 10.

500 թուժանազափ մի գումար է բաժանեսում Նոր-Զուղայի
աղքատներին: *)

Ենչպէս որ «Քառասնից Մանկանց» տօնին ա։ Կատարի-
նեան կուսանաց վանքում հանգ. Մանուկ Յորդանանեանի լի-
շատակին և «Ո. Գէորգալ զօրավարի» տօնին՝ ո. Գէորգ եկե-
զեցում հանգ. Գէորգ Քանանեանի լիշատակին, նոյնպէս և
«Արգարու Հայոց անդքանիկ թագաւորի» տօնին՝ ո. Աստ-
ուածածնի եկեղեցում Արգարեանց ննջեցեալների լիշատակին
պատարագ է մատուցւում, քարոզ խօսւում և հոգեհանգիստ
կատարւում ի ներկայութեան Քահանալական դասի, Ազգ.
երկսեռ դպրոցների աշակերտութեան և ուսուցչական խմբի:



*) Կէս զարից աւելի Կալկաթայի Արգարեանց առեւբական տան ներկայա-
ցուցիչները Նոր-Զուղայի Ազգ. դպրոցներին, հիւանդանոցին, եկեղեցին, ազգա-
կաններին, աղքատներին և առ հասարակ բայոք գիմնազներին տասնեակ հազարներ
են նպաստել և նպաստում. սակայն պէտք է նպատել, որ իրենց անունավ մի տ-
ռանձին հասարատութիւն տակաւին զոյտութիւն չունի, սրով Երգարեան անունը
Քանանեան և Պօղոսիսանեան անունների պէս յաւերժանաց Նոր-Զուղայում: Ցան-
կալի է որ այդ պակասն լրացրուի և որ և է նպատակով մի պատճառելի հաստա-
տութիւն ևս աւելանալ Նոր-Զուղայում «Արգարեան» անունով:

Փ.



1889 թուից սկսած «Բրիտանական և Արտաքին Աստուածաշնչի ընկերութիւնը» Նոր-Զուղալում բաց է անուամ մի ճոխ գրավաճառանոց, Հարաւային Պարսկաստանին Սուրբ-Գիրք մատակարարելու նպատակով հաստատուած: *)

Նորհիւ սովոր Գրավաճառանոցի, Սփահանի նահանգի ամենահեռաւոր գաւառներում ու խուլ տնկիւններում անգամ տարածուած է այսօր Աստուածաշունչն, Սաղմասն և Աւետարանը, զլիստորապէս Հայերէն ու Պարսկերէն լեզուներով:



Մինչև 1893 թիւը Նոր-Զուղալի Ազգ. երկսեռ դրագոցները ոչ միայն ուսումն էին ձրի աւանդում աշակերտաշակերտուհիներին, այլ բոլոր գասագրքերն ևս ձրի մատակարարում: Գիրք գնելու մասին ոչ ոք գաղափար չուներ:

Առաջնորդ Եսայի արք-եպս. Աստուածատրեանը փորձում է Կեդրոնական գմրոցի գասագրքեր պարունակող սենեակը գարձնել Գրավաճառանոցի և առաջին անգամ լայտարարում է, որ այսուհետեւ աշակերտ-աշակերտուհիները պարտաւոր են իրենց հարկաւոր գասագրքերը փողով գնել:

Գասագիրք գնելու սովորութիւնը հետզհետէ ընդու-

*) 1878—1889 թիւը նոյնպէս յիշեալ ընկերութիւնը գոյութիւն է ունենում նոր Զուղայում, սակայն չի ունենում առանձին գրավաճառանոց:

Նելութիւն գտնելուց յետով, նոյն դպրոցի դրան կից սեռնեակները նորոգելով յատկացնուում է առանձին Գրավաճառանոցի, դպրոցի անուամբը կոչելով «Կեդրոնական»:

Տեղի անդարմաբութեան և անձկութեան պատճառով 1905 թուին Կեդրոնական գրավաճառանոցը տեղափոխւում է նոյն նալտատակով շինուած Գ. Քանանեան դպրոցի դրան յարակից ընդարձակ խանութը, սակայն բանուկ փողոցի վրայ շինելով՝ այստեղ ևս անդարմաբութիւններ են ստեղծւում առետրական տեսակէտից:

1908 թուին Անգլ. փոխհիւպատոս Դր. Մ. Ս. Ազգանուրը ի յիշտատակ իր վորամեռիկ քրոջ՝ տ. Լուիզա Ս. Գաւիթխանեանցի, Կեդրոնական դպրոցի հիւսիսալին կողմանմ փողոցի վրայ կառուցանում է մի երկուրկանի շինութիւն, որի առաջին յարկը յատկացրւում է Կօշկակարանոցին, իսկ երկրորդ յարկը՝ Կանանց Բալեգործ. ընկ. Արհեստանոցխանութին և Կեդրոնական Գրավաճառանոցին:

Այսպէս, հետզետէ ժամանակի պահանջների համաձայն ճնաժամացած և ընդարձակուած նոր-Զուզայի Ազգ. Կեդրոնական Գրավաճառանոցը՝ բացի նորանոր հրատարակութիւններ հասարակութեան զանազան խաւերսւմ տարածելու ծառայութիւնից, մեծ դիւրութիւն է ընծալում թէ տեղական և թէ դիւզական դպրոցներին, նրանց անհրաժեշտ դասագըրքեր և ուսման զանազան պիտուքներ մատակարարելով:





Հ. Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ

«Ազգային գրադարան



NL0231549

ԴԻՆ կ 2 ԱԲԵ

Պահապահ Ա. — Հայոցի Ուժ. Կերպության Գրավածառնության

Պատրաս ել սպազրութեան

1.) ՆԱՐ-ԶՈՒՅՎՅԻ Ա. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ.—Պատմական անսութիւն. Տնտեսական վիճակ, Եկեղեցի, Թեմակալ Առաջնորդներ, Առաջնորդական Խորհրդարան, Տպարան, Լրագրութիւն, Մատենադարան և այլն.—Պատմագույն:

2.) ՆԱՐ—ԶՈՒՅՎՅԻ ԱՆԳԻՔ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—Ժողովածու Նուղայում դրածող անկի քան 700 տոածների, 100 օրհնութիւնների, 100 անձեռների, 300 դարձուածների և 800 բաների.—Տեղական բարբառով եւ բառերի լացարութեամբ.

3.) ՆԱՐ—ԶՈՒՅՎՅԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ եւ ՀԱԽԱՏՔ.—Ազգադրական ժողովածու Նոր-Զուղայի զանազան ծէսերի, սովորութիւնների, հաւատալիքների, մնութափաշութիւնների, նախալաշարմունքների և այլն և այլն: